

1(325)

21.01.2013թ.

Հրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտնապուրիսն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍՐԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ՀԱՆԳԻՊՈՒՄՆԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ընթացիկ տարին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կարժևորվի Արցախյան շարժման քառորդ դարյա հոբելյանի հանդիսություններով: Այդ միջոցառումները մեր անկախության դժվարին ճանապարհի վերահամաստվորումը կլինեն, հատկապես մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության խնդրի շեշտումով: Անկասկած, այսօր ամեն մի դպրոցական հրաշալի գիտե, որ 1988-ը առանձնահատուկ նշանակություն ունի մեր ժողովրդի կյանքում: Եվ առանձնահատուկ է ամենից առաջ նրանով, որ համախմբեց ողջ հայությանը:

Հենց միասնականության ոգին էր, որ առաջնորդ եղավ համաժողովրդական ոգորումներում և մղեց հաղթանակների: Թվում է՝ միութենական, առավել ևս՝ ադրբեջանական քաղաքական իշխանությունը հենց դրանից էր ահաբեկված, որովհետև այլ պարագայում բռնություններն ու կտտանքները վերջնականապես կխեղդեին դարաբաղիցների ազատասիրության ձգտումը: Կար նաև մեկ ուրիշ հանգամանք. ամեն ինչ Լեռնային Ղարաբաղում կազմակերպվում էր տվյալ ժամանակի պահանջներին ու իրողություններին համահունչ, ուստի դժվար էր դրա դեմն առնել:

Հիմա արդեն բոլորին է հայտնի, որ անցած քառորդ դարում ծնված ու մեծացած սերունդը, որն Ադրբեջանի և ադրբեջանցիների մասին տեղյակ է միայն պատմության դասագրքից, ոչ մի դեպքում չի համաձայնի իր ճակատագիրը կապել Ադրբեջանի հետ, քանզի ազատության պայքարի դրոշմը նրանց մատաղ հոգիներում է փողփողում:

Ժամանակն անողորմորեն առաջ է ընթանում, և աստիճանաբար սովորանում են Արցախյան շարժման մասնակիցների կենդանի շարքերը: Խոսքը ոչ միայն պայքարի առաջամարտիկների մասին է, այլև առհասարակ բոլոր նրանց, ովքեր ժամանակին Ստեփանակերտի և ԼՂԻՄ շրջկենտրոնների հրապարակներում «Ղա-րա-բաղ» են վանկարկել: Քսանհիմզ տարի առաջ նրանք տասնյակ հազարավորներ են եղել, որոնց մեծ մասն այսօր էլ ապրում է հանրապետության տարբեր բնակավայրերում: Հազիվ թե Արցախում գտնվի մի բնակավայր, որտեղ չգտնվի Շարժման թեկուզ մեկ մասնակից, և դա լավագույն առիթ է, որպեսզի դպրոցներում նպատակային հանդիպումներ կազմակերպվեն նրանց հետ: Այդպիսի հանդիպումներն աշակերտների մոտ ավելի կխորացնեն պատմական փաստերի յուրացումը:

Թվում է՝ նման հանդիպումներ կազմակերպելու համար վերադասի հատուկ հանձնարարականներ պետք չեն: Պետական մակարդակով արժանաիրիշատակ միջոցառումներ, անշուշտ, լինելու են, խոսքը տվյալ դեպքում դպրոցական շրջանակներում նախաձեռնողականություն ցուցաբերելու մասին է:

Պատմությունը սերտում են նաև կենդանի մարդկանց միջոցով, իսկ 88-ի գլխավոր դասը, ինչպես նշվեց, միասնության դասն էր: Այն միշտ պետք է գալու մեզ՝ լինի մեկ դար, թե հազարամյակներ հետո: Իզուր չէ ասված, որ պատմությունն ինքը՝ մարդն է, և պատմական կարևոր անցքերի ակամատես-մասնակցի հետ ամեն մի այդպիսի հանդիպումն ուր սերնդի համար առավել ճշմարիտ ու հավաստի է դարձնում իր ազգի պատմությունը:

«ԼՍՐԱՐԱՐ»

## ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱՄԱՆՈՐԻ ՇՈՒՐԶ

Բաղձալի է Ամանորը թե՛ մեծերի և թե՛ փոքրերի համար: Ամեն մարդ տարի ունի իր բերկրանքն ու սովերը: Ասենք, որ այսօրվա մարդը դժվար ժամանակների կողմն է: Բայց խոստովանենք՝ այդ ե՞րբ է հեշտ եղել, այդ ո՞ր սերնդին է Նևայի պողոտա բաժին հասել:

Աշխարհը խելացնոր վազքով սուրում է առաջ, աշխարհի տասնյակ վայրերում պատերազմներ են ընթանում, մոտորների հռնդյուն են երկրներում և երկնքում, զենքեր են կռում, ժամհիքներ սրում մարդու և խաղաղության դեմ, կեղտոտվում են տարածքները և մարդկային խղճերը: Այստեղ ու այնտեղ դարանում են մարդկանց, սպառնում ու սպանում: Խեղդում են ոչ միայն ժողովուրդներին, այլև նույնիսկ ազատության գաղափարը:

Ղարաբաղն էլ նախորդ դարավերջին արյունով ներկվեց: Եվ այժմ միայն պատերազմի վերսկսման վտանգը չէ մեր միակ ցավը, այլ շատ-շատ բաներ, որ հասարակարգի վերափոխման ծնունդ է կարծես: Կցանկանայի մոր տարում այդ ամենի վերջը:

Որպես ուսուցիչ՝ կցանկանայի, որ մեր ե-

րեխաները պինդ բռնեն գրիչն ու հրացանը, իմանան, որ մեկը մյուսով է պայմանավորված: Ու այնպես չլինի, որ մեր նահատակ բանաստեղծ Կոմիտաս Հակոբյանի ասած՝ շփոթվեն գրիչն ու ավտոմատը: Հիշեն ու իմանան մեր գրերի պատմությունը, որ ինչպես գրողը կասեր՝

*Քարերին են գրվել տառերը մեր,*

*Հողներով են սնվել տառերը մեր,*

*Տեսիլքից են ծնվել տառերը մեր,*

*Երբ փորձել են ջնջել ու եղծանել,*

*Կայծակին են տվել տառերը մեր:*

Իմանալ, որ միայն վանքեր չինելով չէ հաջող մարդացել, այլև զենք կռելով ու կրելով:

Մտորումներիս բարի շղթան շատ է երկար, բայց դրանցից մի քանիսի ի կատարածվելը կցանկանայի: Կուզենայի, որ հայոց ազգը արագ աճ ունենա, առողջ ու խելոք լինեն մեր մանուկները, իսկ երիտասարդները՝ կորովի: Որ ձևը բովանդակության վերածվի, իսկ խոսքը՝ գործի, արագ անցներ անցումային շրջանը, մարդիկ չզվարեն շուկաների լաբիրինթոսում, չվախենան քրիստոնեական բանադրանքով անհոված «13» թվանշանից

և Արևելյան երկրների տոմարացույցով «օձի տարի» հորջորջվածից: Եվ, ի վերջո, կցանկանայի, որ մեր ազգի հովիվները չխաբվեն և լինեն զգույշ Ղարաբաղի կարգավիճակի հարցում և անցյալ դարի 20-ական թվականների նման չտարվեն մի բուռ չամիչով ու խուրմայով:

Բաղձանքս է, որ իրականացան ձեր բոլոր բարի իղձերը ու իմն էլ հետը՝ այս մոր տարում հրատարակվի իմ հեղինակած վեցերորդ գիրքը:


Ես հավատում եմ նոր՝ 2013թ. հուստ առավոտներին, արդար արեգակի ծագելուն, մեր անկախ պետության հռչակմանը այս մոր տարում:

Հավատում եմ գուսան Ջիվանուն՝ «Անկիրթ ցեղերը թափառական կուզան ու կերթան...», իսկ մենք կմնանք մեր հողի վրա:

**Միջայել ԲԵՂԱՐՅԱՆ**  
20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, ԼՂՀ վաստակավոր մանկավարժ գ. Քարահունջ

## ՎԻՃԱԿԸ՝ ԿԱՅՈՒՆ ԲԱՎԱՐԱՐ

«Լուսարարի» հարցազրույցը ԼՂՀ ԳԹԿ տնօրեն Յուրի ԲԱՐՍՅԱՆԻ հետ



- Պ ա Ր Ո Ն  
Ք ա Ր ա մ յ ա ն,  
հերթական արտաքին ընթացիկ գնահատումն իրականացրիք: Նորից հիշենք՝ որ առարկաներից, որ դասարաններում:

- 2012թ. նոյեմբերի 26-ից

դեկտեմբերի 5-ը ԼՂՀ ԳԹԿ-ի կողմից անց է կացվել ԼՂՀ հանրակրթություն իրականացնող բոլոր ուսումնական հաստատությունների 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 11-րդ դասարանների սովորողների արտաքին ընթացիկ գնահատումն հետևյալ առարկաներից. 4-րդ դասարան՝ մայրենի, մաթեմատիկա, 6-րդ դասարան՝ մաթեմատիկա, ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, 7-րդ՝ կենսաբանություն, աշխարհագրություն, ֆիզիկա, 8-րդ՝ քիմիա, հայոց լեզու, հայոց պատմություն, 11-րդ դասարան (խորացված ուսուցմամբ)՝ հայոց լեզու, հայոց պատմություն, հանրահաշիվ, ֆիզիկա, քիմիա, ռուսաց լեզու, անգլերեն, 11-րդ դասարան (միջնակարգ դպրոցներ, ընդհանուր հոսքեր)՝ հայոց լեզու, հայոց պատմություն, հանրահաշիվ, աշխարհագրություն, ֆիզիկա, կենսաբանություն, քիմիա, ռուսաց լեզու, անգլերեն: Ընդհանուր առմամբ ստուգվել է 851 դասարանի 6257 աշակերտ: Պետք է ստուգվեր 6596 սովորող, բացակայել է 339-ը, որը կազմում է ընդհանուրի 5%-ը: Դա նորմալ է համարվում:

- Ի՞նչ առանձնահատկություն ունեն այս արտաքին ընթացիկ գնահատումը:

- Նախկինում ստուգումն անց էր կացվում 50-60 դպրոցներում, ներգրավվում էր աշակերտների 50-70%-ը, հիմա ընդգրկվել են բոլոր դպրոցները և բոլոր դասարանները, կարելի է ասել՝ 100%-ով, իսկ երկրորդ կիսամյակում կանցկացվեն մյուս դասարաններում, գոնե մեկ առարկայից:

րում, գոնե մեկ առարկայից:  
- Ինչպե՞ս է հաջողվել ապահովել այդպիսի մեծ ընդգրկվածություն:

- 2008-2009 ուսումնական տարում բոլոր ստուգվող դասարաններում գրավոր աշխատանքների կատարման ժամանակ վերահսկողությունն իրականացվել է միայն ԳԹԿ աշխատողների կողմից: 2009-2010 ուստարում այդ աշխատանքներում ներգրավվել են նաև մյուս կազմակերպությունների աշխատողներին՝ նախարարության, ազգային ինստիտուտի և չաշխատող մանկավարժներին:

2010-2011 ուստարում, բացի ԳԹԿ-ից, ներգրավվել էին նաև ներկայացուցիչներ դպրոցներից, ստուգվող դասարանների մոտ 20%-ում միայն դպրոցի ներկայացուցիչներն էին: Պարզվել է, որ որոշ դասարաններում խախտվել է արտաքին ընթացիկ գնահատման կարգը. արդյունքները չէին համապատասխանում սովորողների իրական գիտելիքներին (բավական է մեկ ուսուցիչ կամ աշակերտ հուշի, պատկերը լրիվ կեղծվում է, և դա զգացվում էր գրավոր աշխատանքների ստուգման ժամանակ): Դպրոցի տնօրենների հետ անց ենք կացրել սեմինարներ, խորհրդակցություններ, որոնց ժամանակ այդ թերությունները նշվել են: Ասվել է, որ դա պատվի հարց է, ինչո՞ւ պետք է կարգը խախտենք, և աշակերտն իր գիտելիքներին ոչ համապատասխան գնահատվի: 2011-2012 ուսումնական տարում ստուգվող դասարանների 50%-ում վերահսկողությունը կատարվել է միայն դպրոցի ներկայացուցիչների կողմից: Մոտ 15 տոկոսում են հայտնաբերվել թերություններ: Այստեղ արդեն դրական շարժ է նկատվում: 2012թ. օգոստոսյան խորհրդակցությունների ժամանակ դպրոցի տնօրեններին տեղեկացրել էինք, որ արտաքին ընթացիկ գնահատումը պլանավորված է անցկացնել բոլոր դպրոցներում, և որ վերահսկողությունն իրականացվելու է հիմնականում դպրոցի ներկայացուցիչների կողմից: Որովհետև հնարավոր չէ սեղմ ժամկետում բոլոր

տեղերում ԳԹԿ-ն ինքը վերահսկի: Մենք կարող ենք համապատասխան նյութեր տրամադրել, բայց բոլորին վերահսկել՝ գործնականում հնարավոր չէ:

- Անցած անգամ Դուք ասել էիք, որ եթե այդ ձևն իրեն չարդարանցնի, վերահսկողությունը հետագայում դպրոցներին չէթ բողմի: Ի՞նչ կասեիք այդ կապակցությամբ:

- Հիմնականում կարգը պահպանվել է: 851 դասարաններից միայն 133-ում գրավոր աշխատանքները վերահսկվել են ԳԹԿ-ի և դպրոցի ներկայացուցիչների կողմից, իսկ 718 դասարաններում՝ միայն դպրոցի ներկայացուցիչների կողմից, և ընդամենը 56 դասարաններում են արդյունքները կասկածելի եղել: Դա կազմում է 8%, որը նորմալ ենք համարում: Հի եղել դեպք, երբ նույն դպրոցի բոլոր դասարաններում արդյունքները կասկածելի լինեն: Կան դպրոցներ, որ լրիվ նորմալ վիճակում են: Եվ ասեն, որ կասկածելի աշխատանքների արդյունքները ես դպրոցներ ուղարկում եմ հարցականներով, որպեսզի տեսնեն ու քննարկեն: Եվ շատ տեղերում քննարկել են: Ու ոչ մի բողոք չի եղել, բացի հաշմաչի դպրոցից: Նրանք համաձայն չէին իմ դրած հարցականին: Հայոց պատմությունից մասնակցել են երկու հոգի, երկուսն էլ «գերազանց»՝ 10 միավոր են ստացել, որը կասկածելի է թվացել, բայց պարզվել է, որ դա համապատասխանում է իրական գիտելիքին: Ուրախալի է, որ դպրոցներում լուրջ մոտեցում է ցուցաբերվել. տնօրենները, ուսուցիչները զգացել են, որ իմաստ չկա այդքան ծախսեր կատարել ու ոչ իրական գնահատականներ տեսնել: Կազմակերպական առումով արդյունքները գոհացուցիչ են, բայց հասկանալի է, որ ավելի պետք է կատարելագործել:

Մենք պետք է օգնենք տնօրեններին, ուսուցիչներին: Վստահ չենք, որ բոլոր ուսուցիչները նույն չափորոշիչներով են գնահատում աշակերտներին: Մենք պետք է թեստեր մշակենք չափորոշիչներին համապատասխան:

# ԱՍՓՈՓՈՒՄ ՎԻՃԱԿԸ ԿԱՅՈՒՆ ԲԱՎԱՐԱՐ

**1** Մենք դա անում ենք մեթոդիկալորումների նախագահների, մասնագետների, նախարարության աշխատողների, Հայաստանի փորձագետների կարծիքը հաշվի առնելով: Ուսուցիչն էլ կուզենա ճիշտ ստուգում անցկացնել՝ աշակերտի իրական գիտելիքներն իմանալու: Եթե ոչ 100, գոնե 70%-ով ճիշտ գնահատենք, կհամարեն մեծ առաջընթաց:

Ի տարբերություն նախորդ տարիների, եղել է 4 բողոք՝ 4-րդ դասարանի գնահատականների անհամաձայնություն: Ընդ որում, ոչ թե անբավարար գնահատականի համար, այլ՝ «լավ» և «գերազանց»: Բոլոր ուսուցիչներն էլ կարող են զավեցնել մոտ, նայել աշխատանքներն ու քննարկել: Դա է մեր խնդիրը: Ցանկացած միջոցառում, որ կազմակերպում ենք, պետք է նպաստի աշխատանքների կատարելագործմանը: Եթե միայն պիտի լինի արդյունք արդյունքի համար՝ պետք չէ: Աշակերտը պետք է իմանա ինչի համար է ինքը գնահատական ստանում, որտեղ է սխալվել: Եվ իրոք, այդ աշխատանքը կատարվում է: Քաղաքի դպրոցների մեծ մասից, շրջաններից, գյուղական բնակավայրերից զալիս են ուսուցիչներ, ծնողներ, հետաքրքրվում: Ինչպես նշեցի, ընդամենը չորս բողոք է եղել: Ծնողների, դասավանդող ուսուցիչների ներկայությամբ մեզ մոտ մեկ անգամ ևս ստուգվել են գրավոր աշխատանքները: Ճիշտ է, նրանք հոգու խորքում համաձայն չեն, որ ցածր են գնահատված, բայց հանգստի են, որ դա իսկական գնահատականն է: Ինչու՞ն են ուսուցիչների սուբյեկտիվությունը: Նրանք գիտեն, որ աշակերտը լավ սովորող է, և կատարած սխալն անգողջության է: Եվ շատ դեպքերում դա չեն հաշվում ու վերջում բարձր են գնահատում, ինչը չի կարելի ասել մեր պարագայում: Մեր առաջ գրավոր աշխատանքն է: Մենք չգիտենք ինչպիսին է այդ աշակերտը: Սուբյեկտիվ վերաբերմունքն այստեղ չի գործում:

Նոյեմբերի 5-ն էլ, երբ փակ թեստերն ու օժանդակ նյութերն ուղարկում ենք, պատահական ընտրված ժամկետ չէ: որպեսզի դասամատյանում համապատասխան վանդակ նախատեսվի ստուգման արդյունքների համար: Մինչև դեկտեմբերի 15-ը արդյունքներն ուղարկվել են դպրոցներ (վերլուծությունն ավելի ուշ է կատարվել), որպեսզի հասցնեն քննարկել, բողոքարկել, ու վերջնական արդյունքները մտցվեն մատյան, և նշանակվի կիսամյակային գնահատականը:

*- Իրոք կազմակերպչական մասը մեծ չափով է ազդում գրավոր աշխատանքների արդյունքների վրա:*

- Թեստային կարգով ստուգումների դժվարությունը հենց դրանում է. երբ կարգը խախտվում է, չիմացող աշակերտը կարող է հանկարծ «գերազանց» ստանալ: Սեկ գերազանցիկ կարող է «գերազանց»-ներ պարզապես մյուսներին: Բայց երբ կարգը պահպանվում է, պատահականությունը նվազագույնի է հասցվում: Մենք չունենք միայն ընտրովի պատասխաններով թեստեր: Եթե թեստերը ճիշտ են կազմում, և կարգը պահպանվում է, իրական գնահատականն իմանում ենք:

հատականն իմանում ենք:

*- Այժմ արդյունքների մասին:*

- Ընդհանուր գնահատված 6257 սովորողներից 10-բալանոց համակարգում 0-3 միավոր (անբավարար) ստացել է 1697-ը (27%), 4-6 միավոր (բավարար)՝ 2869 (46%), 7-8 միավոր (լավ)՝ 1431 աշակերտ (23%): Սովորաբար 9 և 10 միավորները միասին են հաշվում, բայց այս անգամ առանձնացրել են: 9 միավոր («գերազանց») ստացել է 210 հոգի (3%), 10 միավոր («բացառիկ»)՝ 48 (1%): 9 և 10 միավորներում հաշվի են առնված նաև կանխատեսվող (շրջաններում դասարաններ են եղել, երբ բոլորը կան 6-ից 4-ը «գերազանց» են ստացել): Ստացվում է, որ «գերազանց»-ները հիմնականում 1-2% են կազմում, ինչպես նախորդ անգամ: Նախորդ ստուգման համեմատությամբ աճը 2-3% է: Բայց դա համեմատական աճ է: Վիճակը, կարելի է ասել, գրեթե անփոփոխ է: Չենք կարող ասել, որ ռեալ առաջընթաց ունենք: Բացի այդ, նույնն է պատկերը ավագ դպրոցներում: Ես արդեն ավագ և միջնակարգ դպրոցների համեմատություն չեն անում՝ համարելով ավելորդ: Դա կարելի էր անել միայն առաջին տարին: Այստեղ էլ տեղում կանգնած ենք: 1-2%-ը են չեն համարում մեծ տարբերություն:

*- Իսկ ինչու է այդպես, երբ ավագ դպրոց հիմնականում արդեն լավ սովորողներն են գնում:*

- Հնարավոր է, որ նախկին տարիներին թեստերը կազմելիս պատահականությունն ավելի շատ է եղել: Գնալով կատարելագործվում ենք, այսինքն՝ հիմա գնահատականներն ավելի ռեալ են: Կարող է պատճառներից մեկը դա լինի: Հարցին միակողմանի չպետք է մոտենալ: Ես նախ մեզանից են սկսում: Պատճառը կարող է և՛ թեստերը լինեն, և՛ կազմակերպչականը, որոնք գնալով կատարելագործում ենք, այնուհետև՝ ծրագրերը, դասագրքերը, ինչու էլ՝ ուսուցիչները: Դա կոմպլեքս համակարգ է: Հարցին պետք է մոտենալ բոլոր կողմերից: Եվ միանգամից ասել՝ որտեղ է լավ, որտեղ թույլ՝ չենք կարող: Կրթությունը ամենից կոնսերվատիվ համակարգն է: Արդյունքը միանգամից չի երևում: Գյուղատնտեսություն չէ, որ եթե տարին բարենպաստ է, բերքն էլ առատ է: Մի մասնագետ, մի ուսուցիչ պատրաստելը տարիների համառ աշխատանք է պահանջում:

Չենք ասում արդյունքները վատ են, բայց գոհացուցիչ էլ չեն: Եթե հիշում եք, առաջին տարիներին 60-70%-ը «անբավարար» էր: Կա առաջադիմության բավականաչափ աճ՝ 30-40%: Հիմա հասել ենք մի որոշակի վիճակի ու կանգ առել: Բայց դա չպետք է երկար տևի: Համալիր միջոցառումներ իրականացնելու շնորհիվ պետք է նորից քայլ անել: Ամբողջ խնդիրն այն է, թե ինչ անենք, որ տեղում կանգնած չմնանք, դադարը երկար չտևի:

Ռուսաստանում ունենք դարաբաղի նշանավոր թեստաբան՝ Վադիմ Սերգեևիչ Ավանեսով: Ափսոս, մենք նրա ներուժը չենք օգտագործում, ինչպես ԱՊՀ որոշ երկրներում է: Նա գտնում է, որ տեխնիկայի ներկա պայմաններում ծայրամասային

գյուղերում մասնագետների պակասը չպետք է պատճառ դառնա ոչ բավարար ուսուցման: Համակարգչին մեկ լավ տիրապետող կարող է աշխատանքները համակարգել, հեռավար ուսուցում կազմակերպել: Այս կերպ քաղաքի լավ մասնագետի դասը կարելի է փոխանցել շրջանի դպրոցները: Այլապես ինչու՞ պետք է մասնագետի բացակայության պարագայում առարկան չուսումնասիրվի ծայրամասային դպրոցներում: Ես այդ մասին արդեն երկու տարի է՝ խոսում եմ: Այսօր ինտերնետն ամենաառաջին կապն է ամբողջ աշխարհում: Հեռու չէ այն օրը, որ մեզ մոտ էլ այն կգործի բոլոր բնակավայրերում: Ժամանակի ընթացքում ամեն ինչ կհարթվի:

*- Իսկ ի՞նչ է ցույց տալիս արդյունքների վերլուծությունը ըստ դասարանների:*

- 11-րդ դասարան՝ խորացված ուսուցմամբ. 26% «անբավարար», որը մեծ թիվ է, 48%՝ «բավարար», 22%՝ «լավ» 4%՝ «գերազանց» (պահպանվել են նախորդ տարիների ցուցանիշները):

*- Իսկ ինչու՞ բացատրել անբավարարների մեծ քանակը:*

- Շատ վատ էր վիճակը այս տարի խորացված ուսուցմամբ հայոց պատմություն և հանրահաշիվ առարկաներից: Պատճառը ստույգ ասել չեն կարող: Սկզբում դպրոցներում բողոքում էին, որ հանրահաշիվ առաջադրանքները բարդ են եղել: Մասնագետները, ուսուցիչները ներկայացել են, քննարկել թեստերը և հանդգցել, որ բողոքներն անհարկի են: Այստեղ մտածելու տեղիք են տալիս ուսուցիչները, աշակերտները: Դասագրքերի մասին չեն խոսում, որովհետև նախորդ տարվա դասագրքերն են ու նույն ծրագրերը:

Ընդհանուր հոսքում նույնպես վիճակը նույնն է մնացել: Եթե ավագ դպրոցում ռուսերենի, անգլերենի, ֆիզիկայի վիճակը լավացել է (քիմիան մնացել է նույնը՝ «անբավարար»՝ 18-19%), ընդհանուր հոսքում վիճակը նույնն է. 34%՝ «անբավարար», 57%՝ «բավարար», 8%՝ «լավ», 1%՝ «գերազանց»:

Այսպիսով, վիճակի փոփոխություն չկա, բայց կարծում են, որ այդպես էլ պետք է լինի: Հնարավոր չէ, որ ամեն տարի 20-30% մեծ տարբերություն լինի: Գալիս է պահ, երբ բարձրանալով՝ մի տեղ կանգ ես առնում: Այստեղ արդեն առաջ են գալիս ուսուցիչների առեստավորման, կարգերի և այլ հարցեր: Այսինքն՝ պետք է հաջորդ քայլն անել՝ առաջ գնալու համար: Մի քայլ արդեն արվել է՝ կարգապահության, զգոնության առումով, սովորողները լուրջ են մոտենում: Բայց ուրիշ քայլեր էլ պիտի արվեն, որ տեղից պոկում լինի:

*- Մի քանի խոսք՝ հիմնական դպրոցի մասին:*

- Ստուգվողների մեծ մասը հիմնական դպրոցից էր՝ 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ դասարաններ, դրա համար էլ համարյա նույն տոկոսները պահպանվել են: Բայց դասարանները բարձրանալով՝ թուլանում են: Այսպես, 6-րդ դասարանում «անբավարար»-ների քանակը 27% էր, հիմա 7-րդ դասարանում 30% է, 8-րդում՝ 40%:

*- Իսկ ինչու՞ է դա բացատրվում:*

- Պատճառը միանգամից չեն կարող ասել: Զգացվում է, որ երեխաները դասարանից դասարան բարձրանալով՝ թուլանում են: «Լավ» և «գերազանց» գնահատականները հիմնականում պահպանվում են: Բայց «անբավարար»-ների և «բավարար»-ների տարբերությունը նկատվում է մոտ 8-9 %-ով: Օբյեկտիվ պատճառ կարող է համարվել այն, որ աշակերտներից ոմանք մտածում են, որ 9-րդ դասարանն ավարտելուց հետո դուրս են գալու դպրոցից, ուստի թուլացնում են տեմպերը: Իսկ ցածր դասարաններում դեռ կարողանում են ազդել աշակերտի վրա՝ սովորի, սովորիր: Բայց մնացած դասարաններում վիճակը նույնն է: Նույն ձևով «գերազանց»-ների քանակն է. 6-րդ դասարան՝ 6%, 7-րդ՝ 2%, 8-րդ՝ 1%: Գնալով նվազում է:

4-րդ դասարանի վերաբերյալ ասեն, որ արդյունքները 2-3%-ով բարելավվել են, բայց «գերազանց»-ները՝ 8%, լավ չէ: Գոնե 10-20% պետք է լինեն: «Անբավարար»-ների քանակը 25% է, նույն ձևով էլ պահպանվում է: «Բավարար»-ների քանակը՝ 37%, «լավ»-ը՝ 35%, վատ չէ: Բայց նայում ենք «գերազանց»-ների քանակին դասամատյանների համեմատությամբ, տեսնում ենք, որ տարբերությունը մեծ է: Դրա համար էլ բողոքում են: Սակայն եկել են, տեսել ու հանդգցել, որ մենք ճիշտ ենք:

*- Պարոն Քարամյան, այսբանով հանդերձ, ինչպե՞ս եք գնահատում վիճակը:*

- Կայուն բավարար: Եթե «բավարար»-ների քանակը 50%-ից բարձր է, վատ է, իսկ 70%-ը արդեն անտանելի է: Բայց եթե երկու տարի արդեն նույն տոկոսային հարաբերությունն է՝ խորհելու տեղիք է տալիս:

Դպրոցի տնօրենության պատասխանատվությունն ու զգաստացումը կա: Նորից են ասում, մեր նպատակն է օգնել դպրոցներին: Դրա համար էլ ընթացիկ գնահատումը տարվա ընթացքում պետք է պարբերաբար լինի՝ մի քանի անգամ: Դա ոչ թե դպրոցին ստուգում ենք, այլ օգնում: Նրանց համար էլ պարզ է դառնում, թե ինչ վիճակ է: Կգա ժամանակ, երբ դպրոցն ավելի ճիշտ կգնահատի իր աշակերտին, քան մենք: Եվ այն ժամանակ մեծ գործառնություն կդրվեն դպրոցի տնօրենի վրա: Իսկ մինչ այդ պետք է օգնենք տնօրենին: Ես միշտ ասում եմ՝ գիտելիքի ամենավերջին ստուգումը համակարգիչն է անում, իսկ ամենից ճիշտ ստուգումը՝ ուսուցիչը: Նա ավելի լավ գիտի, թե երեխան ինչ գիտելիքներ ունի: Ցավոք, այսօր դա խախտվել է: Մենք օգնում ենք վերականգնելու դպրոցի վարկանիշը, ուսուցչի հեղինակությունը: - Շնորհակալություն հարցազրույցի համար:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնը սույն թվականի փետրվարի 1-ից սկսում է միջնակարգ հանրակրթական ծրագիր իրականացնող հաստատությունների (անկախ կազմակերպարկական ձևից) շրջանավարտների «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Օտար լեզու» (ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն), «Ստեղծագործական աշխատանք», «Նախնական գիմնոպեդիական պատրաստություն» առարկաներից պետական ավարտական, միասնական և կենտրոնացված (2013թ. բուհերի ընդունելության) քննությունների կազմակերպման գործընթացը:

Միասնական և կենտրոնացված քննություններին մասնակցելու համար շրջանավարտը (դիմորդը) պետք է լրացնի դիմում-հայտ:

2012-2013 ուստարվա շրջանավարտները դիմում-հայտը լրացնում են իրենց ուսումնական հաստատություններում, նախորդ տարիների շրջանավարտները, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտները՝ ԼՂՀ գնահատման և թեստավորման կենտրոնում (հասցեն՝ ք. Ստեփանավերտ, Մարտունի 97):

Միասնական քննությանը մասնակցելու համար անհրաժեշտ է՝

- 3 x 4 չափսի լուսանկար,
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- «Արցախբանկ» ՓԲԸ «Վերածնունդ» մասնաճյուղում Գնահատման և թեստավորման կենտրոնի 22311 008416500 հաշվի համարին յուրաքանչյուր քննությանը մասնակցելու համար փոխանցել 1500 (հազար հինգ հարյուր) դրամ և վճարի ամօրոգագիրը կցել դիմում-հայտին:
- Միասնական քննության վճարից (1500 դրամ) ազատվում են հետևյալ դիմորդները՝
- 1-ին և 2-րդ խմբերի, ինչպես նաև հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք,
- ՀՀ և ԼՂՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձինք:
- Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին կցում են համապատասխան փաստաթղթերի պատճենները:
- 12-րդ դասարանների աշակերտները պետական ավարտական քննություններին հայտագրվում են իրենց ուսումնական հաստատություններում: Դիմում-հայտերի ընդունման և պետական ավարտական քննությունների հայտագրման վերջին ժամկետը 2012 թվականի մարտի 1-ն է:
- Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 97- 40 -51 հեռախոսահամարով:

**«Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն**

ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՅՈՒՂԸ

ՀՀ ագրարային համալսարանի Ստեփանավերտի մասնաճյուղի մի խումբ ուսանողներ տարեվերջին հայտարարեցին իրենց մի հետաքրքիր նախաձեռնության մասին...

հողատարածք, ձեր սովորած մեթոդներով հող մշակեք, անասնապահությամբ զբաղվեք: Այդ ինչն էլ ամերիկացի ֆերմերն իր տրակտորը, կոմբայնը քշում է, իսկ դարաբաղցին չի ուզում: Աշխատեք ոչ թե դիպլոմ ստանալ և ագրոնոմ ձևակերպվել համայնքում, այլ դառնալ հողի մշակներ: Մեր հարստությունը հողն է, բարիք արտադրվում է հողում, մեր պետությունը զարգանալու է այդ հողի վրա: Ուրիշ ճանապարհ չունենք»,- ասաց նա:

մտտեցումները: Նրա տեսակետով՝ նախնական խորոշացումը պետք է պետությունը սկսի, ստեղծի բաժնետիրական ընկերություն՝ 50:50 մասնաբաժնով և ժամանակի ընթացքում իր բաժնետոմսերը վաճառի հողօգտագործողին: Երիտասարդն անվարկույն է, պետությունը չի կարող գործ բռնել մի մարդու հետ, ով մեկ շնչի հաշվով ունի 0,6 հա հող: Պետք է մի կազմակերպություն (լինի դա Գյուղատնտեսության նախարարությունում, թե Գյուղի և գյուղատն-

տեսական չէ: Այդ հարցը հնարավոր է լուծել տարբեր ենթակառուցվածքների համալիր աշխատանքի արդյունքում: Նա քննադատեց երիտասարդների իներտ և դժգոհ պահվածքը, իբր գիտական ներուժի չի օգտագործվում՝ ի դեմս համալսարանի: Բայց նրանց կողմից կոնկրետ առաջարկություններ երբևէ չեն եղել: Կոոպերացիային գյուղացիները դժվարությամբ են գնում: Խաչենի համայնքում պիլոտային ծրագիր են իրականացրել: Հողերը միավորել են, Հիմնադրամի միջոցներով մշակել, ծախսերը համել, մնացածը բաժանել հողատերերին՝ ցույց տալու, թե ինչպես կարելի է միասնաբար մշակել հողը, ստեղծել բաժնետիրական ընկերություն (և ոչ թե՝ կոլեկտիվ տնտեսություն), կոոպերացիայի միջոցով միավորվել, պահպանելով ագրոտեխնիկական կանոնները՝ արդյունքում ստանալ ավելի բարձր եկամուտ: Անցած տարի նման ծրագիր իրականացրել են ևս ութ համայնքներում: Բայց պետությունը այսպես շարունակել, իհարկե, չի կարող: Գյուղատնտեսությունը զարգացնելը ֆինանսական լուրջ ներդրումներ է պահանջում, ինչն էլ հնարավորության սահմաններում արվում է: Նախարարը դժգոհություն հայտնեց նաև մասնագետների որակից: Ամեն տարի ահռելի գումարներ են ծախսվում արտասահմանից մասնագետներ հրավիրելու համար: Ուսանողների փորձուսուցումը տոհմակայանում ձևական բնույթ է կրում: Երբևէ չեն տեսել, որ ուսանողը հետևողականորեն, ժամը 6-ից՝ կիթը սկսվելուց մինչև այդ ամբողջ ցիկլի ավարտը մնա տոհմակայանում:



«Ինչպե՞ս երիտասարդներին ներգրավել գյուղատնտեսության մեջ և ընդհանրապես, ինչպե՞ս երիտասարդությանն ամրացնել գյուղում»: սա էր քննարկման թեման:

Ուսխորհրդի նախագահի ներկայացմամբ՝ առիթը հետևյալն է. պետությունը գյուղատնտեսությունը հայտարարել է գերակա ճյուղ և ամեն ինչ անում է նրա զարգացման ուղղությամբ, սակայն շոշափելի արդյունքների մասին խոսելը դեռևս վաղ է: Պատճառներից մեկն էլ, թերևս, երիտասարդության շրջանում պետականաշինության գործընթացում սեփական դերակատարության գիտակցության բացակայությունն է կամ ոչ պատշաճ գիտակցումը, ուստի ամհրաժեշտություն է առաջացել ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ երիտասարդության շրջանում գյուղի և գյուղատնտեսության նկատմամբ բեկում առաջացնելու համար:

Կլոր սեղանը վարող՝ բուհի մասնաճյուղի ղեկան Արտակ Դուլյանը չքաքցեց իր ոգևորությունը ներքևից՝ ուսանողներից առաջարկությունը համարելով ժողովրդավարության առաջնություն, միևնույն ժամանակ գտնելով, որ համալսարանը միայնակ այդ հարցում դժվար թե կարողանա արդյունավետ գործել՝ առանց համագործակցելու շահագրգիռ կազմակերպությունների հետ:

Նրա կարծիքով, կլոր սեղանը՝ որպես առաջին ծիծեռնակ, երիտասարդությանը գյուղատնտեսությանը ինտեգրելու հարցում հիմք կհանդիսանա հետագա համագործակցության, ինչի արդյունքում կնախանջվեն ոչ միայն «Երիտասարդ գյուղատնտեսներ» հասարակական շարժման անելիքները, այլև կորվեն համագործակցության հիմքերը:

Մասնաճյուղի ղեկավար Վահրամ Հայրապետյանը ողջունեց երիտասարդների այդ քայլը, այն փաստը, որ վաղվա մասնագետները մտահոգված են գյուղի և գյուղատնտեսության զարգացման գործընթացով, որ ագրարային բուհի ուսանողները, մտահոգված իրենց ապագայով, հոժարակամություն են հայտնում իրենց գիտելիքներով կարողության սահմաններում աջակցել գյուղատնտեսության զարգացմանը:

Ուսանողներից մեկը տեսակետ հայտնեց, որ պետք է իրականացնել խթանող միջոցառումներ՝ երիտասարդներին ագրարային ոլորտում ներգրավելու համար, սակայն, աշխատանքի տեղավորում, բարձր աշխատավարձ, ինչն էլ անմիջական դեր պիտի ունենա պետական սեկտորը:

Բուհի դասախոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտակ Գուլյանի համոզմամբ՝ մեր երկրի զարգացման հիմքը գյուղատնտեսական արտադրությունն է, ինչի շուրջ նա բազմիցս խոսել է: Դրա համար առկա և անհնարաբար հիմքը՝ հողային պաշարները, որոնք, դժբախտաբար, լիարժեք չեն օգտագործվում: Աշխարհում ոչ մի պետություն մեկ բնակչի հաշվով այսպիսի հողային հնարավորություն չունի: 136 հազար հա միայն վարելահող կա մեր հանրապետությունում, որից ամեն տարի ցանքաշրջանառության տակ դրվում է ընդամենը 50-60 հազար հա-ն, իսկ 70-80 հազար հեկտարը թողնվում է մոլախոտերի, մացառների տակ, կրծողներին, վնասատուներին, որոնք բազմանալով՝ հոգս են դառնում: Բացի վարելահողերից, ունենք ահռելի քանակությամբ հողատարածքներ՝ անասնապահության համար կերային բազա ծառայող արոտավայրեր ու խոտհարքեր: Գիտնականը կոչ արեց ուսանողներին՝ որպես նրանց այդ նախաձեռնության արդյունք, ստեղծել օդակներ և դիմել կառավարությանը՝ իրենց հատկացնել հողատարածքներ, որպեսզի հիմնեն, «Երիտասարդական ավանդներ» և միանում ոչ ավանդական մեթոդներով գյուղատնտեսական արտադրություն վարող խմբերին: «Ընկերներով, բարեկամներով միավորվեք, պահանջեք մի 50 հա

ԿՈՉ ԱՐՃԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ

Մենք՝ Արցախի երիտասարդ սերնդի ներկայացուցիչներս, մեր ճակատագիրը կապել ենք արցախյան հողի ու ագրոպարենային համակարգի հետ:

Մենք քաջ գիտակցում ենք, որ այսօր երիտասարդի համար գյուղատնտեսությունը շահավետ է, ու գյուղը հետաքրքիր դարձնելու գործում բազմաթիվ դժվարություններ կան կուտակված, և որ դրանք այսօր չեն առաջացել, բայց և միաժամանակ չենք կարող դիտորդի պես կողքից մայել, թե ինչպես է դատարկվում գյուղը, կամ որ նույնն է՝ անտարբեր լինել մեր հետո-ի նկատմամբ...

Մենք հստակեցրել ենք մեր խնդիրներն ու նպատակները, որոնց մեջ առաջնահերթությունը տալիս ենք.

- աջակցել գյուղական երիտասարդության սոցիալական, ստեղծագործական, կրթական և ձեռնարկատիրական նախաձեռնություններին,
- խթանել գյուղացիական տարածքների զարգացման միջոցառումների իրականացմանը,
- նպաստել գյուղի վերածնունդի ուղղված պետական թե մասնավոր սեկտորի նախաձեռնած յուրաքանչյուր իրատեսական միջոցառման,
- սրբորեն պահպանել արցախյան դարերի խորքից եկած գյուղի հոգևոր և մշակութային ժառանգությունը, գյուղական կյանքի ավանդույթները...

Այսօր, պատմական դեպքերի բերումով, հենց մեզ՝ երիտասարդներին է բաժին ընկել Արցախի գյուղը վերածնելու առաքելությունը, և մենք համոզված ենք, որ այդ կենսական խնդիրը կյանքի կոչելու համար ունենք և ներուժ, և պատրաստակամություն, և հավատ...

Արցախի՝ երիտասարդներ, միացե՛ք մեզ... Ուս ուսի տանք՝ Արցախի գյուղին մենք մոր շունչ կտանք:

ԳՊԱԴ-ի Ստեփանավերտի մասնաճյուղի «Երիտասարդ գյուղատնտեսներ» ուսանողական շարժում

Բուհի մեկ այլ դասախոս՝ դոկտոր, պրոֆեսոր Սարիբեկ Գալստյանն այն կարծիքին է, որ գյուղատնտեսությամբ պետք է զբաղվեն միայն գյուղատնտեսական փորձ և կրթություն ունեցող անձինք: Մինչդեռ մեզ մոտ ցանկացած մարդ եթե ուրիշ տեղ հաջողության չի հասնում, ընտրում է գյուղատնտեսությունը: Վարկ է վերցնում, սկսում զբաղվել, արդյունքի չհասնելով՝ խրվում է պարտքերի մեջ, հիասթափվում ու թողնում-հեռանում: «Ստեղծվել է մի այնպիսի իրավիճակ, որ ամենամահեռակար ճյուղը մեր երկրում գյուղատնտեսությունն է»,- ասաց նա: Նրա համոզմամբ՝ այս ոլորտում պետք է կատարվեն արմատական վերափոխումներ: Միջին հաշվով մեկ ընտանիքին բաժին հասած 3 հա հողը չի կարող բավարարել այդ ընտանիքի պահանջները: Դրա համար էլ երիտասարդը բռնում է քաղաքի ճանապարհը, որը ցանկալի չէ մեր երկրի համար: «Երիտասարդին պետք է կապել հողին: Իսկ դա անելու համար պետք է գնալ տնտեսությունների խոշորացման, որովհետև յուրաքանչյուր արտադրություն արդյունավետ է, երբ ունի օպտիմալ ծավալ: Ոչ էլ խոշոր տնտեսավարողներին և ձեռնտու 1000-1500 հա հող մշակել: Մենք պետք է ունենանք տնտեսություններ, որոնք կունենան 20-50 հա հողատարածք, որտեղ կստեղծվի բազմաճյուղ արտադրություն, այն կարող կլինի և ընտանիք պահել, և մնալ այդ հողի վրա»:

տեսության աջակցության կամ երիտասարդական հիմնադրամում), որը ռիսկային գործոնը կվերցնի իր վրա:

ԼԴՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի տնօրեն Վահրամ Բաղդասարյանը մատնանշեց երիտասարդի և նրա նմանների պակաս տեղեկացվածությունը: Այնինչ, տեղեկատվական աղբյուրները շատ են, հենց կոնկրետ Հիմնադրամի սրահում, որտեղ անցկացվում էր կլոր սեղանը, տարբեր քննարկումներ են կազմակերպվում, երիտասարդներին միշտ կոչ է արվում գալ ու մասնակցել: Նրանց կտրամադրվեն բազմաթիվ նյութեր, որպեսզի կարողանան ուսումնասիրել նորարարությունները, որոնք անչափ շատ են: Ժամանակին բուհում սովորածն այսօր արմատական վերափոխում է ապրում, որովհետև փոխվում են տեխնոլոգիաները, ագրոտեխնիկան: Փորձի փոխանակման նպատակով շատ տեղեր այցելելով՝ եկել են այն համոզման, որ եկամտատանալու համար մեծ հողակտոր պետք չէ: Ավելին, այսօր դրվում է գյուղատնտեսության ոլորտի առավել արտադրականացման խնդիրը: Հիմնադրամի ղեկավարն ուսանողներին կոչ արեց ներգրավվել այդ աշխատանքներում:

ԼԴՀ գյուղատնտեսության նախարար Անդրանիկ Խաչատրյանի համոզմամբ՝ պետք է տարբերել գյուղի զարգացումը և գյուղատնտեսության զարգացումը: Փորձել միայն գյուղատնտեսության զարգացմամբ լուծել երիտասարդներին գյուղում ամրացնելու հարցը՝ իրա-

Ոնկտոր Վահրամ Հայրապետյանը շնորհակալաբար ընդունեց տոհմակայանում ուսանողների փորձուսուցումը կազմակերպելու վերադասի պատրաստակամությունը: Սակայն գտնում է, որ ուսումնասիրողական տնտեսության առկայությունը պարտադիր է ո՞վ թույլ կտա ուսանողին սրկվում կատարել տոհմային կայանի թանկ արժեքող կոլի վրա: Բայց համամիտ էր ամառային շրջանում մեխանիզատորի հետ բերքահավաքին ուսանողի մասնակցության առաջարկությանը:

Կրթության և գիտության նախարար Սլավա Արյանը նույնպես հայտնեց իր նկատառումները: Նախ տարեցտարի գյուղատնտեսական մասնագիտությունների գծով դիմորդների թիվն ավելանում է, ինչը նշանակում է, որ տնտեսավարող սուբյեկտները և հանրությունը համոզվում են այս մասնագիտությունների պահանջվածության մեջ: Բայց միայն քարոզչությամբ երիտասարդին գյուղատնտեսության մեջ ներգրավելը դժվար է՝ մինչև շահագրգռվածություն ու պայմաններ չլինեն: Նախարարի համոզմամբ՝ պետք է խելամորթեն, նպատակային օգտագործել ոլորտում ներդրող ահռելի միջոցները: Իսկ դա կախված է մասնագիտական պատրաստվածությունից: ԿԳ նախարարությունն այս ուղղությամբ միջոցառումներ է իրականացնում: Կրթական կարգերը հնարավորություն են տալիս գյուղատնտեսական մասնագիտություն ընտրածին մի քանի մասնագիտացում ստանալ, տիրապետել գյուղտեխնիկային: Կարևոր հանգամանք է նաև այն, որ երիտասարդն ինքը հակված լինի գյուղում մնալու և աշխատելու: Կամաց-կամաց պետք է վերանա անպայման պետական կառուցում աշխատելու մտայնությունը: Մենատնտեսի մոտ էլ կարելի է աշխատել եթե ինքը չես կարողանում ստեղծել: Չպետք է խորշել աշխատանքից: Ինչ մնում է գյուղում երիտասարդներին ամրացնելուն, նրանց սոցիալական, բնակարանաշինության, կրթական, մշակութային, ժամանցի կազմակերպման խնդիրները պետք է զուգահեռ լուծվեն, ինչին էլ ուղղված են պետության ջանքերը:

Ներկայումս հույս հայտնեցին, որ մնան քննարկումները չեն կրի ձևական բնույթ, կլինեն պարբերական, որոնց ընթացքում երևան կհանվեն երիտասարդներին հուզող հիմնախնդիրները, գյուղատնտեսության առջև ծառայած հարցերը, դրանց լուծման հնարավորությունները և այլն:


«Երիտասարդ գյուղատնտեսներ» շարժման առաքելության մասին դեռ վաղ է խոսելը: Բայց նրա հեռանկարայնության տեսլականը պարզորոշ է:

Սվերլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ-300

ՍԻՐՈՎ ԵԿԱԿ...

ԹԵՎԱԾՈՒՄ ԵՐ ԱՆՉՈՒԳԱԿԱՆ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՈՒԿԻՆ



Սայաթ-Նովան իր մեծագույն տաղանդով, մարդկային ազնվությամբ, արդարանտությամբ ու անպարփակելի հունամիզմով պատկանում է ոչ միայն հայ, այլև աշխարհի մյուս ժողովուրդներին: Ամեն մի ազգ, հիրավի, կարող է հպարտանալ նման զավակ ունենալով: Սայաթ-Նովայի երգարվեստը համաշխարհային մշակույթի գանձարանում հավերժ մնալու տեղ ունի: Մեծ տաղերգուի ծննդյան 300-ամյակին նվիրված բազմաթիվ միջոցառումներ են կազմակերպվել հանրապետության կրթական հաստատություններում, որոնցից մի քանիսի մասին գտնելու ենք ստորև:

Ուշագրավ էր ասունքի մրցույթը՝ նվիրված Եղիշե Չարեմցի 115-ամյա և Սայաթ-Նովայի 300-ամյա հոբելյաններին Շուշիի և Աբովյանի անվան հիմնական դպրոցում: Թեմատիկ առումով երկու բանաստեղծների ստեղծագործությունները շողկապված էին միմյանց: Բանաստեղծները (հայտնի լեզվի հանձնախումբ) մեծ աշուղի երգերի առանձնահատկությունները դիտարկում էին յուրովի՝ ամբողջացնելով Սայաթ-Նովայի երգերի արժեքը: Դրանք նրա գրչով գրված խրատական ուղղորդիչ պատգամը՝ «Գիր սիրե, դալամ սիրե, դավթար սիրե», ստացավ խալիստեղծության ուղեգիր ու դարձավ խորագիր՝ կրթության զինանոցի գանձերը պեղելու համար: Սազը ձեռքին բանաստեղծն իր խորագիտությամբ դառնում է երգի որսորդ, իմաստուն հոգիների սրտի ջուր՝ իմանալով իր երգ ու խաղի կարևորությունը, որի գործընթացն իմանալն ասունքին չէ տրված:

Ամեն մարթ չի կանա խըմի՝ իմ ջուրըն ուրիշ ջըրեն է, Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գըրեն է... Դպրոցում տիրող սայաթնովյան վարակիչ տրամադրությունը եզրագծին հասավ 9-րդ դասարանում կազմակերպված բաց դասով: Հայտնի լեզվի և գրականության փորձառու, բանիմաց ուսուցչուհի Լիդա Սկրտչյանն ամեն ինչ խնամքով նախապատրաստել էր մանրակրկիտ նպատակայնությամբ, որի շնորհիվ սայաթնովյան շնչով վարակված դասարանում թևածուր էր մեծ աշուղի՝ միջնադարի մեծագույն սիրերգակի ոգին: Կենսագրական կարևոր մանրամասները, ծննդյան թվականի տարբեր մոտեցումներն ըստ Ախվերդյանի, Թունանյանի, Սևակի, պատանի տարիքում Արուսիհի արհեստավարժությունը, Պարսկաստանի Էնգելի նավահանգստում նրա գրչագրած և Մատենադարանում պահվող Նարեկացու են գտել հետաքրքիր փաստեր Սայաթ-Նովայի և «Դավթարի» ու քամանչայի մասին, որոնք հանգրվան են գտել Հայաստանի պատմության պետական բանագրարում, և նրան առաջադրված «հրաժարականի» մասին սազ-քամանչայից, որին արդեն Հաղպատի վանքի վանական տեր Ստեփանոսը պատասխանել է. «Ես նրանից ձեռք քաշողը չեմ, որովհետև ինձ արեղա ձեռնարկելու ժամանակ այս լաբերը գրպանումս էին մնացել և ինձ հետ օրհնվել են, ուստի նվագում եմ օրհնված լաբերով...»: Ուսումնասիրող աշակերտները հայտնում են, որ Սայաթ-Նովա անունով կա խառնարան Փայլածու (Մերկուրի) մոլորակի վրա, որն այդպես է կոչվել 1978թ., Մոլորակագիտության միջազգային միության պրեզիդենտ Գ. Կատերֆելդի կողմից: Նաև հայտնում են, որ Սայաթ-Նովայի ավագ որդու՝ Մելիքսեթի ժառանգը՝ Տեր Մովսես Սայադյանը, ևս Աբովյանից պակասաբար քահանան է եղել, իսկ նրա ծոռուհիներինց մեկը՝ Պ. Պռոշյանի կինը: Սայաթ-Նովայի մասին ֆրանսերեն լեզվով գրվել է գիրք, որ հայերեն են թարգմանել Սորբոնի համալսարանի շրջանավարտ երիտասարդ Մուրադյանը և ֆրանսիացի բանաստեղծ Սերժ Վենտուրինը: Նկարահանվել են կինոնկարներ, որոնցում նա ցուցադրվում է որպես արդարության ու բարության, սիրո ու գեղեցկության երգիչ: Համամարդկային է Սայաթ-Նովայի քնարը, որով պայմանավորված է նրա երգերի ժողովրդայնությունը, և 300 տարի անց էլ նա դարձյալ հայ աշուղական երգի արքան է, ու կարևոր է նրա կարծիքները կիսվում են նրա ծննդյան թվականի շուրջ՝ այն համարելով 1712թ., 1713թ., 1717թ., 1722թ.:

Եվ եթե մի ամբողջ տասնամյակ էլ տոնվի մեծ աշուղի 300-ամյա հոբելյանը, շարունակ ուսումնասիրվի նրա ժառանգությունը, դարձյալ նա կլինի ժողովրդի հոգուն տենչալի և միակ հայը, որ ստեղծագործելով երեք լեզուներով՝ հայերեն, վրացերեն, թուրքերեն, դարձյալ մնում է հայ ժողովրդի պարծանքն ու հպարտությունը:

Եվ մեր բազմադարյան գրականության նվիրյալները՝ Ախվերդյան, Բրյուսով, Սահյան, Շիրազ, Սևակ, տալով արժանի գնահատական, արժևորել են հայոց երկնակամարի մեծություններից մեկի՝ մեծն Սայաթ-Նովայի ժառանգությունը: Բայց առանձնապես Հովհաննես Թունանյանի և Գևորգ Բաշինջադյանի շնորհիվ ճանաչում գտավ Սայաթ-Նովա մեծությունը, որոնց շնորհիվ նրա 200-ամյակի առթիվ 1913թ. Թիֆլիսում կառուցված Սայաթ-Նովայի մահարձանի մոտ կազմակերպեցին հռչակ ստացած Վարդատոնը, և արդեն 100 տարի շարունակ փառաբանվում է Սայաթ-Նովա անունը՝ տարածում գտնելով նաև միջազգային մշակութային մակարդակներում, և ՅՈՒՆԵՍԿՕ-ն 1963 թվականը հռչակելով նրա 250-ամյակի տարի, ինչը 2012 թվականը կոչեց Սայաթ-Նովայի 300-ամյա հոբելյանական տարի: Եվ մեզ անչափ հոգեհարազատ է անգուզական Սայաթ-Նովան՝ հայ աշուղական արվեստի անկրկնելի մեծությունը:

**Վարդիթեր ՉԱԿՈՒՅԱՆ**  
Շուշիի և Աբովյանի անվան հիմն. դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

ՍԱՅԱԹՆՈՎԱՅԻ ՏԱՂԸ ՇՆՉԵՑ ՆՈՐՈՎԻ

Ինչպես գիտենք, ՅՈՒՆԵՍԿՕ-ն անցած տարվա իր հոբելյանական միջոցառումների ցանկում ընդգրկել էր միջնադարի հայ համաճարտ տաղերգու Սայաթ-Նովայի 300-ամյակի տոնակատարությունը: Սայաթնովայի կրթության համար հոբելյանական տարին հագեցած էր. մեծամուն աշուղ-բանաստեղծին նվիրված՝ կազմակերպվել են ասունքի, շարադրությունների, պատի թերթերի մրցույթներ և քաղաքային բաց դասեր ու այլ միջոցառումներ: Ուշագրավն այն է, որ տարվա սկզբին հ. 10 դպրոցում (կազմակերպիչ՝ ուսուցչուհի Լիլյա Սարգսյան) և տարվա վերջին հ. 1 դպրոցում (կազմակերպիչ՝ ուսուցչուհի Ռոմելա Դադայան) անցկացված քաղաքային բաց դասերի թեման Սայաթ-Նովայի քնարերգությունն էր: Ասել է թե՛ տարին սկսվել է հանձարեղ սիրերգակի տաղով և վերջացել դարձյալ նրա տաղով, քանզի աշակերտների շուրթերով սայաթնովյան տաղը դարերի հեռավորությունից նորովի հնչեց և իմաստավորվեց՝ բաց դասերի և միջոցառումների մասնակիցներին տանելով Սայաթ-Նովայի տառապանքի, կարոտի, երազների և սիրո աշխարհը: Ուսանելի, ընդօրինակման դաս էր մայրաքաղաքի ևս. Աբովյանի անվան հ. 1 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ռոմելա Դադայանի կողմից 9-րդ դասարանում համագործակցային դասի տարրերով վարած «Սայաթ-Նովա» թեմայի ամփոփման դասը, որին մասնակցում էին

հանրակրթական դպրոցների ուսուցիչներ և տողերիս եղիմնակը: Գեղեցիկ էր դասի մուտքը. աշակերտներից մեկը երաժշտության ուղեկցությամբ թիֆլիսյան բարբառի ճիշտ շեշտադրությամբ գեղեցիկ ներկայացրեց «Մե խոսք ունիմ իլթիմազով» ստեղծագործությունը, այնուհետև մի խումբ աշակերտներ մեկ տողով լրացրին գրատախտակին մշված ժամանակագրական աղյուսակը, հետո նրանում ներկայացված իրադարձությունները մանրամասնեցին ուրիշները, իսկ տաղերգուի կյանքին և ստեղծագործությանը վերաբերող առանձին հատվածներ սլաղներով ներկայացրին մեկ այլ խումբ աշակերտներ: «Աշխարհումս այն չիմ քաշի» ստեղծագործությունն աշակերտների կողմից անգիր ներկայացվելուց հետո հանձնարարվեց քարտային աշխատանք T-աձև աղյուսակի լրացմամբ բնագրի փոխադրումը գրական հայերենի: Վեր հանվեցին նաև ստեղծագործության պատկերավորման, արտահայտչական միջոցները: Աշակերտների կողմից ներկայացվեցին «Արի ինձ անգամ կալ, այ դիվանս սիրտ», «Ձեռը վի՛ կալ» խրատական ստեղծագործությունները: «Սայաթ-Նովա» ֆիլմից ցուցադրվեցին առանձին հատվածներ (արքայադուստր Աննայի գովքը, աշուղական արվեստը, Հաղպատի վանքը, պարսիկների արշավանքը), ինչպես նաև Սայաթ-Նովայի գերեզմանը Թիֆլիսում և «Դուն էն գլխեն» երգը

Գուրգեն Դաբադյանի կատարմամբ տեսաերկային: Հետաքրքիր էր ուսուցչուհու կողմից ասուվածաշնչյան և սայաթնովյան մտքերի համադրումն ու ընդհանրացումը Վենի դիագրամով ներկայացնելը: Աշակերտները եկան այն եզրահանգման, որ Սայաթ-Նովան փառաբանել է սերը, ազնվությունը, արդարությունը, մկրվածությունը և դատապարտել ստորությունը, մեծագությունը, թծանքը, կեղծիքը: Իսկ Սիմկվեյն մեթոդով էլ խմբավորվեցին մի շարք հասկացություններ, որով Սայաթ-Նովան մեզ ներկայացվեց երկու՝ կյանք և սեր գոյականներով, երեք՝ սիրելի, զարմանալի, նրբանկատ ածականներով, չորս՝ սիրել, տառապել, երգել, խրատել բայերով, մեծ տաղերգուին բնութագրող «մարդու մեջ սեր որոնող սիրահար» հինգ բառից կազմված բառակապակցությամբ և «Սայաթ-Նովան ապրեց ու ապրեցրեց, տառապեց, հոգնեց, այրվեց, բայց չդադարեց այրվելուց» ընդհանրացնող նախադասությամբ: Աշակերտները ներկայացրին մեծերի ատյունները Սայաթ-Նովայի մասին: Նշեցին նաև «Վարդատոն» կոչվող սայաթնովյան համազգային ամենամյա տոնի անցկացման և մեծ տաղերգուի գերեզմանի վրա մահարձանի կանգնեցման գործում Հովհ. Թունանյանի և Գևորգ Բաշինջադյանի ունեցած դերը: Դասապրոցեստում ուսուցչուհին վարպետորեն ապահովեց գրականության և հայոց լեզվի, գրականության և պատմության, գրականության

ուսուցչուհի և երաժշտության, գրականության և կերպարվեստի միջառարկայական կապերը՝ անթերի կատարելով իր առջև դրված թեմայից բխող նպատակներն ու խնդիրները: Ամփոփիչ խոսքում վաստակաշատ ուսուցչուհին ընդգծեց, որ Սայաթ-Նովան քայլող ազնվություն էր և շրջող անկեղծություն, որ նրանից պիտի սովորեցնեք ամենադժվար գիտությունը՝ ազնվորեն ապրելը և դժվարագույն արվեստը՝ բոլորամյակ սիրելը: Վերջում աշակերտներին փոխանցվեց բոլոր ժամանակների համար խիստ անհրաժեշտ սայաթնովյան պատգամը. «Գիր սիրե, դալամ սիրե, դավթար սիրե»: Դասի քննարկման ժամանակ դրվատանքի խոսքեր ասվեցին ուսուցչուհու վարած դասի ու նրա համեստ պահվածքի մասին, քանզի մշտազբաղ մարդու համար դժվար է մնան պատասխանատվության զգացումով հանդես գալ շարքային ուսուցչի դերում (հանրապետության վաստակավոր ուսուցչուհի Ռոմելա Դադայանը նաև դպրոցի տնօրենն է և ԼՂՀ Սժ պատգամավոր) և լինել մարդ մեծատառով՝ բառիս ամենալայն իմաստով:

**Գրեկա ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
Սրբեկանակերպի քաղաքապետարանի կրթության բաժնի գլխավոր մասնագետ



ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ-300

...ՍԻՐՈՎ ՄԱՑ

ԹԱՐԿԱՎՈՐՆԵՐ՝ ՄԵԾ ԳՈՒՄԱՆԻ ԾՆԵՂՅԱՆ ՏՈՒՆԻՆ

1912թ. Թիֆլիսում մեծ շուքով տոնվել է Սայաթ-Նովայի ծննդյան 200-ամյակը: Այդ գործի նախաձեռնողը եղել է Ամենայն հայոց բանաստեղծ Յուզի. Թումանյանը: Իսկ 2012թ. աշխարհասփյուռ հայությունը տոնեց աշուղ-բանաստեղծի 300-ամյակը:

Համաձայն երգչի հորեղբայրի էր նվիրված Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանում տարեկան կազմակերպված գեղեցիկ միջոցառումը: Ուսումնարանը թեև արհեստագործական է, բայց այստեղ սովորողների մեծ մասը արվեստասեր է, ինչի մասին վկայում են նրանց ելույթները: Ավստ, միջոցառման շրջանակները ներկայացրել են հաջողակ բացակայության պատճառով: Բայց դա բոլորովին չազդեց ներկաների տրամադրությանը:



կասեր. «Սայաթ-Նովան այն հազվագյուտներին է, որոնց փառքը էլնում է իրենց գերեզմանից, ինչպես անխուփ թոնրից, որ ծովըր հանձնել է ժամանակի երդիկին՝ զուտ բոցը պահելով գալիք ժամանակներին»:

Միջոցառումը ողջունեց և խրախուսեց:

սանքի խոսք ասաց ԼՂՀ ԿԳՆ մասնագիտական կրթության բաժնի վարիչ Լ. Ղարախանյանը:

Իսկ ամենամեծ անակնկալը սպասվում էր ուսումնարանի տնօրեն Լ. Գաբրիելյանի կողմից: Ներս բերվեց թառը, և Սայաթ-Նովայի սիրահար տնօրենը սկսեց... Նվագել: Այնքան ամնիջական ու անսպասելի էր այդ պահը, որ չհասցրինք մտածել, թե ինչ է կատարվում: Բոլորը հուզմունքից քարացել էին, շատերի աչքերում արցունքներ կային: Սայաթ-Նովայի երգերի կենդանի ելևէջները մեկ անգամ էլ վկայեցին վաղուց հաստատված ճշմարտությունը:

Ամեն մարդ չի կանա խընձի՝ իմ ջուրըն ուրիշ ջրերն է, Ամեն մարդ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գրերն է...

Սայաթ-Նովան անմահ է: Սայաթ-Նովայի նման բանաստեղծները չեն մեռնում, բանգի նրանց մահից սկսվում է երկրորդ կյանքը՝ անմահությունը...

**Իվերա ԱԲՐԱՎԱՅԱՆ**  
**Սրբեկանակերպի արհեստագործական ուսումնարանի հայոց լեզվի եւ գրակ. ուսուցչուհի**

Դասարանը, որտեղ կազմակերպվել էր միջոցառումը, հիշեցնում էր 18-րդ դարը ու ժամանակի ամենամեծ գուսան-բանաստեղծ Սայաթ-Նովային: Պատից կախված էին մեծ սիրերգակի հանրահայտ նկարը, ասույթները, սեղանին դրված էր գուսանի անբաժան գործիքը խորհրդանշող քամանջան: Իսկ հատակին գույնզգույն վարդի թերթիկներ էին: Միջոցառումն սկսվեց մոմերի լույսի տակ: Այն բացեց ուսումնարանի ուսումնական գծով փոխտնօրեն Վ. Բալայանը: Այնուհետև ելույթ ունեցան աշակերտները, որոնք երգեցին ու բանաստեղծություններով ներկայացրին Սայաթ-Նովայի կյանքն ու ստեղծագործությունը: Մեծ տաղերգուի մասին մեծ փոփոխ խոսք ասաց հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ն. Գրիգորյանը: Վաստակաշատ ուսուցչուհին մեջբերեց գուսանի տողերը:

Թի վուր խալիսին հասնի՝ կատարյալ իմ յիս...

Իրոք, կատարյալ էր Սայաթ-Նովան, կատարյալ էր իբրև մարդ, քաղաքացի, անհույս սիրահար և իբրև գուսան-բանաստեղծ: Եվ ինչպես մեծն Սևակը

ՀՈԳՈՒ ԵՎ ԳԱՂԱՓՈՐԻ ԱՇՈՒՂ-ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Միջնադարյան հայ տաղերգության մեջ ամենասիրված անուններից է Սայաթ-Նովան: Այդ ժամանակի տաղերգուների հետ միասին հայ աշուղական-բանաստեղծական գրականությանը՝ ունր չա հարստացրեց իրաշալի տաղերով ու շար ուլ: Մեծ տաղերգուն կարծես գիտեր, որ իրանով կուակվելու է միջնադարյան հայ քնարերգության վերջին փառավոր էջը: Իր երգերով նա հաճելի թարմություն, գեղարվեստական նոր ձևեր, թեմաներ բերեց գրական ասպարեզ, որը և նորություն էր եկեղեցական, հոգևոր երգերի միապաղաղության ու կաշկանդվածության մեջ:

Սայաթ-Նովան մարդկային զգացմունքների ու հույզերի արթնացման վարպետ բանաստեղծ է: Նրա ողջ ստեղծագործությունը ներծծված է պարզությամբ ու բարությամբ, արդարին ու գեղեցիկին հասնելու վեմ առաքելությամբ, կախարհական ռոմանտիկայով: Եվ այդ կախարհական «ղալամի» տակ էլ շնչավորվել է կինը՝ իր ողջ հմայքով: Երբ ընթերցում կամ ըմբռնում ենք մեծ աշուղի տաղերը, մեր աչքերի առաջ ուրվագծվում է նրա «թարփի» արած գրգալը՝ իր նազանքով, հրաշալի գուսանակի, լալ ու գոհարի մեջ:

Երեսըտ նուր լուսնի նման քանի կեհա, կու բուրբուրի,

Էնդու համա բու տեսնողըն իր ճամփեմեն կու մուրըրի,

Յիսի մըտնում իս մեջլիսումըն, շանգ շուխի-շաբանգ իս անում:

Պատկերներն ավելի են որոշակիանում, երբ նա մտնում է մեջլիսները, նրա զուգըր զնգզնգում է ջիղջիղի պես, հանում սագի ու սանթուրի ձայն: Այստեղ արդեն հնչելանում են կնոջ քայլվածքը, հագի ատլասը, երեսի բողն ու երկար վարսերը: Սրանք զուգակցվում են բնության անարատության, գունազեղ ու անուշահոտ ծաղիկների բուրմունքին:

Բաղըն բըրբուրով լցվիլ է, վարթ գուլգազը չի պակասում,

Բացվիլ ին գառ ծաղիկները, սիրուն նազը չի պակասում,

Յասանաններն էլ են ուրախ, լալ երազը չի պակասում:

Սայաթ-Նովան բանաստեղծության մեջ նկարչի վրձնահարվածով զծագրում է կնոջը: Եվ դա նրա մոտ վարժ ու հարթ է ստացվում: Իրոք, ո՞ր նկարիչը կարող է մի կտավի մեջ տեղավորել այդքան գույներ ու պատկերներ:

Պատկերըտ դալամով քաշած, թահրըտ ռանգեռանգ իս անում,

Երեսիտ խալըն ծածկում է՝ մագիրըտ խափանգ իս անում,

Բացվիլ իս կարմիր վարթի պես, բըրբուրի հիղ հանգ իս անում,

Ալբեքըտ օսկումըն շարած, պըռռըտ մահանգ իս անում...

Դրանով նկարիչ-բանաստեղծը չի բավարարվում, ավարտված չի համարում իր կտավը: Գույներն ու խաղերն իրար տալով՝ նա բացում է սիրուհու հմայքի գաղտնիքը և մեջտեղ բերում ուրիշ երանգներ:

Ծուցիտ մեջըն վարթ, մանհշակ, սըմբուլ ու սուսան իս չիմի,

Քու տերըն բաղն ի՞նչ կոնե, քու հոտըն ռեհան իս չիմի...

Մեծ աշուղի տաղերը թեպետ 300-ամյա պատմություն ունեն, իրենց արդիականությունը չեն կորցրել: Երեքդարյա հնության փոշին անգոր էր ծածկելու մեծ տաղերգուի գրական ժառանգությունը: Այդ, այսօր այն ավելի հնչել է, ավելի մատչելի մերօրյա սերնդի համար: Այնքան զորեղ է նրա քնարերգությունը, որ մեկ տարի շարունակ ողջ հայությունը շուքով տոնում է նրա ծննդյան 300-ամյակը:

Հոբելյանական միջոցառումների շարքից անմասն չի մնացել նաև մեր դպրոցը: Դեկտեմբերի 5-ին դպրոցի դահլիճում տեղի ունեցավ գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված մեծ տաղերգուին: Միջոցառման նախաձեռնողն ու կազմակերպիչները դպրոցի հայոց լեզվի և գրականության մեթոդիավորման անդամներն էին (Լ. Աբրահամյան, Զ. Սահակյան): Ցերեկույթին իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցին դպրոցի շնորհաշատ աշակերտները, մանկապատանեկան կազմակերպիչ Ա. Սայիսյանը: Մեծ աջակցություն ցուցաբերեց նաև համայնքի մշակույթի օջախը՝ ի դեմս Ռ. Սարգսյանի և Մ. Մուխյանի: Միջոցառման կազմակերպմանը նպաստեց և ոգեշնչեց նաև մի կարևոր համագամանք: Վերջերս Ստեփանակերտում տեղի ունեցած «Ամաղեուս» մրցույթում մեր կրթօջախի սան Միեր Մուսյանը ինքնուս կատարողների մեջ գրավեց առաջին պատվավոր տեղը՝ մեծ ուրախություն պարզելով մեր դպրոցին: Ցերեկույթը նաև Միերին շնորհավորելու և մեծարելու պատեհ առիթ էր: Հոբելյանական ցերեկույթի ընթացքում մեր մրցանակակրի կատարմամբ հնչեցին գուսանի անգուգական տաղերը, բեմադրվեցին դրվագներ համաձայն քնարերգուի կյանքից:

Հնչեցին իրանալի արտասանություններ մեծ սիրերգակի ստեղծագործությունից: Ժողովրդական-գուսանական երգը թևածեց դահլիճում, և սայթնույթն տրամադրությունը համակեց բոլորին: Սայաթ-Նովան կատարյալ անհատականություն էր, ժողովրդի սրտից ու հոգուց բխած բանաստեղծ, դրա համար էլ նրա տաղերը դարերով վառ կմնան մեր սրտերում ու ունկերում:

**Զնբուջ ՍԱՅԱՎԱՅԱՆ**  
**Տոմու միջն. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի**

ՄԻՇՏ ՍԻՐԵԼԻ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

Հաղորդիքի Մ. Սանվելյանի անվան միջնակարգ դպրոցի դահլիճում կայացած միջոցառումը՝ նվիրված մեծ սիրերգակ Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին, երկար կմնա մասնակիցների հիշողության մեջ: Դահլիճ մտնողի ուշադրությունն էր անմիջապես գրավում կահավորված բեմահարթակը: Պատից կախված էին աշուղ-բանաստեղծի մեծադիր նկարը, տարբեր բովանդակությամբ պատի թերթեր, սեղանին դրված էր քամանջան, գործիք, որով մի ժամանակ Սայաթ-Նովան գերել է գոգավերի սրտերը, սեր բորբոքել քարացած սրտերում: Սեղանին մեծ սիրերգակի գրքերն էին: Դահլիճն ալեկոծվում էր ոգևորությունից:

Բացման խոսքով հանդես եկավ դպրոցի տնօրեն Արթուր Մինասյանը՝ հակիրճ, բովանդակալից ներկայացնելով Սայաթ-Նովա հանճարին: Այնուհետև խոսքը տրվեց միջոցառման կազմակերպիչ, հայոց լեզվի և գրականության վաստակավոր ուսուցչուհի Լյուբա Մայիլյանին: Ուսուցչուհին խոսեց Սայաթ-Նովայի դերի ու նրա տաղերում արտահայտված փիլիսոփայության մասին՝ նշելով, որ ազնվության, արդարության, համերաշխության ու մարդկայնության վերաբերյալ նրա խրատները նույնքան արդիական են, որքան՝ աշուղի ասարած ժամանակներում: Ահա ինչու այ-

սօր էլ՝ երեք հարյուր տարի անց, նա ներկայանում է ոչ միայն ապրող, կենդանի անձնավորություն, այլև ժամանակակից: Լ. Մայիլյանը խոսքն ավարտեց «Աշխարհումս ախ չին քաշի» տաղի արտասանությամբ:

Խորհրդավոր լռություն էր իջել դահլիճում... Իրենց անզուգական սամուըքով ներկաներին հիացրին դպրոցի տասնմեկերորդ հունամիտար դասարանի սաները՝ անդրադարձ կատարելով Սայաթ-Նովայի կյանքին, ստեղծագործություններին, խոհախրատական մտքերին ու նաև երգերին: Բոլորը շունչները պահած՝ հետևում էին ասանըողներին: Մի պահ թվաց՝ ոչ թե գտնվում ենք Հաղորդի միջնակարգ դպրոցում, այլ Հերակլ Երկրորդ թագավորի արքունիքում: Ելույթ ունեցավ նաև Հաղորդի «Դիզակ» ժողգործիքային համույթը:

Միջոցառման վերջում շնորհակալական խոսք ասաց կրթության բաժնի գլխավոր մասնագետ Ս. Ղարախանյանը:

Արդարև, դարերից եկող ու դեպի դարերը գնացող մեր մեծերը միշտ մեր կողքին են՝ սպասված, սրտանոտ ու հարազատ...

**ԱՆԻ ՍԱՎԱԳՏԱՆ**  
**ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետ, Հայ գրականության 2-րդ կուրսի մագիստրանտ, Նույն դպրոցի ուսուցչուհի**

ՄԵԶ ՀԵՏ Է ՀԱՐ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ

Ինչ ժամանակներում էլ ապրենք, հայ աշուղական արվեստի կարիքը կունենա, կզգա ու բարձր կգնահատի ամեն մի ազնիվ հայ:

Մարտունու հ. 1 դպրոցում (այստեղ ցանկալի միջոցառումները հաճախակի ու բազմաբնույթ են լինում) հաճելի ու տպավորիչ միջոցառում անցկացվեց՝ նվիրված մեծն Սայաթ-Նովայի 300-ամյակին:

Գեղազիտության կաբինետի դիմապատին գուսանի մեծադիր նկարն էր՝ մեզ միշտ հարազատ թախծախառն հայացքով: Չախից նախորդում էր ցերեկույթի իմաստավորող մի պաստառ. հատկանշականն այստեղ հայկական ավանդական նախշազարդ քամանջան էր:

Միջոցառումը կազմակերպել էր հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ջուլիետա Սարգսյանը՝ ներառելով դպրոցի բոլոր կարող ուժերն ու տեխնիկական հնարավորությունները: Մասնակցում էին հյուրեր քաղաքի մյուս դպրոցներից, քաղաքային գրադարանից, արհեստագործական ուսումնարանից և այլ հիմնարկներից: Բացման խոսք ասաց արվեստի երախտավոր Վ. Շիրինյանը:

Ժամանակակից տեխնիկական միջոցներով անընդմեջ ցուցադրված էին Սայաթ-Նովայի անձնական և սյուժետային լուսանկարներ, նրա մահարձանը Թիֆլիսում, հարգանքի տուրքի պահեր:

Առանձնապես հուզիչ էին վրաց երիտասարդի հայերեն, ապա վրացերեն երգերը...

Արտասուքներ երևացին մեր աչքերում, երբ քար լռության մեջ հատուկ ընթացակարգով ներ-

կայացվող երգացանկի հերթական պահին հնչեց Ֆլորա Մարտիրոսյանի քաղցրալուր ձայնը:

Սայաթ-Նովային թարմությամբ, կենդանի ներկայացնելու համար ջանքերը շնորհաշատ աշակերտներին էին նաև: Նրանք ներկայացրին Սայաթ-Նովայի կյանքն իր բոլոր ելևէջներով՝ ամեն պահ զուգորդելով խմբային կամ մեներգերով:

Խոսեցին նրա մարդկային արժանիքների և նրան տրված արժանի գնահատականների մասին: Եվ այն մասին, որ նրա գրական-աշուղական ժառանգությունը՝ որպես հայ ժողովրդի դարավոր մշակութային հարստության փառավոր էջեր, համամարդկային ավանդ է:

Ջ. Սարգսյանի կողմից կարևորվեց նաև այն, որ Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակը զուգահեռաբար էր բազմաթանկ ու բազմախնու, ազնիվ արվեստագետ Ջարգանդ Դարյանի ծննդյան 100-ամյակին, ով իր «Սայաթ-Նովա» գրքում գեղարվեստական նրբերանգներով լուսաբանեց մեծն աշուղ-բանաստեղծի կյանքն ու դարձավ հայ մարդու հոգու բարեկամը:

Դպրոցի տնօրեն Վ. Պողոսյանն իր շնորհակալությունը հայտնեց գեղեցիկ միջոցառման կազմակերպիչներին ու մասնակիցներին:

Գովեստի և գնահատանքի խոսքեր ասացին նաև հրավիրված ուսուցիչները:

**Իրինա ԳՐԻԳՈՐՅԱՆ**  
**Մարտունու արհեստագործական ուսումնարանի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի**

ԲԱՑ ԴԱՍԵՐ

ՂԱՍՏԵԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐԻՆԱԿ

ՇԵՔԻԱԹԻ ԴԱՍ

Ուսուցման կարևոր օղակ է դասղեկական աշխատանքը: Այն ավելի է կարևորվում, երբ ծառայում է նպատակին: Վերջերս այդպիսի մի աշխատանքի ակնարկները դարձանք Վ. Զհանգիրյանի անվան հ. 11 դպրոցի հունամահիտար 12-րդ «ա» դասարանի դասղեկ Գրետա Բարսեղյանի կազմակերպած դասղեկական բաց դասին: Թեման սովորողների մասնագիտական կողմնորոշման խնդիրն էր վերաբերում. արդիական հարց, որ հուզում է շատերին, ավելի շատ՝ ավարտական դասարանի շրջանավարտներին: Բացվում է էկրանը, գրված են հետևյալ տողերը.

Անցնում են տարիները,  
Սիս դարձա տասնյոթ,  
Ո՛ր գնամ սովորեմ,  
Ի՞նչ աշխատանք կատարեմ:

Ի՞նչ մասնագիտություն ընտրել. մարդու համար, թերևս, շատ կարևոր հարց: Ճիշտ ընտրած մասնագիտությունը հնարավորություն է տալիս ինքնաբացահայտվելու, ինքնահաստատվելու, ստեղծագործելու և ապրելու: Պատահական չէ, որ շատերը երջանկություն են համարում և այն, որ ունեն սիրած աշխատանք:

Դասղեկը խորհուրդ է տալիս ընտրել այնպիսի մասնագիտություն, որի համար հետո աշակերտները չզղջան, և որով հասկանան, թե ինչ են ուզում կյանքից: Չպետք է վախենալ դժվարություններից, քանի որ դրանք են կատարելագործում անձին: «Ամերիկացի հոգեբանները գտել են, որ մարդու խառնվածքին համապատասխանում է որոշակի մասնագիտություն, և դա մեծ հաջողություններ է բերում աշխատանքի բնագավառում: Կարևորը ոչ թե դառնալն է, այլ ինչպիսին լինելը:

Աշակերտները համոզվեցին, որ առաջին և երկրորդ կարգի մասնագիտություն չի լինում, կարևորը՝ սիրել ընտրած աշխատանքը: Երեխաները կարողացան իրենց տեսնել ապագա մասնագետի դերում, անզամ իրենց ընկերների կարողություններն ու ընդունակությունները նկատելով, խորհուրդներ տալ միմյանց: Շատ հետաքրքիր էր մասնագիտական կողմնորոշման ծառը, որն իրենից ներկայացնում է խորհրդանշական պատկեր: Դասարանը բաղկացած է 26 հոգուց, նրան-

ցից 7-ը դեռ չէին կողմնորոշվել, որոնք պատկերված էին 7 տերևներով, 8 հոգի երկնտում էին և պատկերված էին 8 ծաղիկներով, իսկ 11 հոգի արդեն կողմնորոշվել էին և պատկերված էին պտուղներով՝ խնձորներով: Մարդու կյանքը բազում ընտրությունների շղթա է: Մասնագիտության ընտրությունը թերևս ամենաբարդն է, որովհետև դրանով է պայմանավորված, թե աշխատանք ինչ դեր կունենա նրա կյանքում: Աշակերտներից մեկը՝ Նարեն, այն կարծիքին է, որ մասնագիտության ընտրության հարցում ծնողները չպետք է ճնշում գործադրեն երեխաների վրա, կարող են միայն խորհուրդ տալ, ոչ թե պարտադրել:

Մասնագիտական կողմնորոշման հարցում կարևոր գործոն են մասնագետների հետ հանդիպումներն ու երկխոսությունները: Դասղեկն ապահովել էր նաև այս պայմանը՝ զրույցի հրավիրելով ծնող, իրավաբան Հասմիկ Հարությունյանին: Աշակերտները նրան ուղղեցին իրենց հետաքրքրող հարցերը և ստացան բավարար պատասխաններ: Ծնող մասնագիտությունների բացի կարևորեց արհեստները՝ մեջբերելով Հովի. Շիրազի խոսքերը. «Արհեստը մարդու համար ոսկե բիլլազուկ է»: Նրանք օգնում են լուծել կենցաղային շատ խնդիրներ:

Տիկին Բարսեղյանի հանձնարարությամբ կազմվել էր վերջին տասը տարիների մասնագիտությունների հնգյակը (ցույց են տրվում էկրանին):

Ամենայի կարծիքով՝ առաջին տեղում են տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետները: Նրանք այսօրվա համակարգչային աշխատողներն են: Այդպիսի մասնագետ դառնալու համար պետք է ունենալ մաթեմատիկական լավ ընդունակություններ և ուսանել կիրառական մաթեմատիկայի բաժնում:

Ամուշիկը կարևոր է էկոլոգների դերը: Նրանք տվել են «Շրջակա աշխարհը բուժող մարդիկ» անվանումը: Դա նպատակահարմար կլինի մեզանից նրան, ով հենց իմնազնա և փրկի անհետացումից Կարմիր գրքում գրանցված կենդանիների, իսկ հետո կրթություն ստանա բնապահպանության կամ կենսաբանության բաժնում:

Նարեն բարձր է գնահատել լանդշաֆտա-

լին դիզայներներին, որովհետև նրանք են գեղեցկացնում մեր շրջակայքը: Մեզանից մեկը կդառնա այդպիսի մասնագետ, եթե ունենա նկարչու շնորհ: Նա պետք է ուսանի գեղարվեստի ակադեմիայում կամ ուսումնառանում:

Ամժելիկան գերադասել էր հոգեբան-վերլուծաբաններին, քանի որ մարդիկ միայն նրանց են վստահում իրենց զաղտնիքը, միայն հոգեբան-վերլուծաբանները կարող են մարդուն բերել հոգեկան հավասարակշռություն: Առաջարկվում է ընդունվել հոգեբանության կամ բուժական գործ բաժինը: Բայց հարկ է հիշել, որ նախ և առաջ պետք է կարողանալ վերլուծել ինքն իրեն:

Կարինեի համար անհրաժեշտություն են մեներեքները, այն անձինք, ովքեր վերահսկում են ընկերությունների հաշվետվությունները, մինչև հարկային տեսչի կողմից ստուգումները: Նրանց անվանում են «Արհեստավարտ հոգեբաններ»: Պետք է սովորել ֆինանսներ և վարկ կամ աուդիտ բաժնում:

Մասնագիտությունների և արհեստների վերաբերյալ դասղեկի կողմից նախապես առաջարկված խաչքառը կազմել էր հաշատուրը: Խաչքառի 14 պատասխաններն ունեն մեկ ընդհանուր հարց՝ ո՞վ է նա:

Խաչքառը լրացնելուց հետո ուղղահայաց կարմիր վանդակում ստացվեց «մանկավարժություն» բառը՝ բոլոր մասնագիտությունների ուղղորդողը: Խաչատուրը հպարտությամբ նշեց. «Այդ ղուք եք, որ դնում եք բոլոր մասնագիտությունների նախահիմքը, ինչի համար շնորհակալություն»:

Նման միջոցառումները, դասղեկական դասերն ուսանելի են և տպավորիչ ապագա մասնագետների համար: Հատկանշական է, որ աշակերտների հայացքներում մենք տեսանք երախտագիտության արտահայտություն: Վերջում դասղեկը հաջողություններ մարդեց նրանց երազանքների իրականացման գործում:

Կրկին բացվում է էկրանը, որի վրա գրվում է հետևյալ քառատողը.

Հազարավոր մահատակներ  
Մեզ սուրբ հող են պարզվել,  
Լինենք երկրին պիտանի,  
Նրանց հետնորդն արժանի:



Որպես տնային աշխատանք՝ աշակերտները տետրերում նկարել էին իրենց սիրած հեքիաթի հերոսներին, հարցեր կազմել, նկարագրել, հայտնել իրենց կարծիքը, իսկ «Երկնքից երեք խնձոր ընկավ» խորագրի տակ աշակերտների գունեղ ու հետաքրքիր նկարներով զարդարված էր դասասենյակը:

Ուսուցչուհին դարձ վարեց խԻԿ համակարգով: Խթանման փուլում մտազրոհին մասնակցում էին բոլորը: Ոգևորությունը մեծ էր, արդյունքը՝ ակնհայտ:

Լ. Յարամիչյանի նպատակն է դեռևս կրտսեր դպրոցական տարիքից երեխաներին զգալ ապա լեզվի ամբողջ հմայքն ու հարստությունը, ճիշտ արտահայտվել բանավոր ու գրավոր խոսքում, կարողանալ խոսքի միջոցով հասկանալի դարձնել սեփական մտքերը, հույզերն ու զգացմունքները, դատողություններն ու մտադրությունները:

Աշակերտները տեղին էին կիրառում հունանիշներն ու հակահիշները, ճիշտ համեմատություններ անում, գրագետ ու պատկերավոր շարադրում իրենց մտքերը, բնութագրում գործող անձանց՝ նուկիցիներին, քաջալերում կամ քննադատում նրանց, իսկ բեմասարությունը մի առանձին հմայք ու զվարճանք պարզեց ներկաներին:

- Երեխային չի կարելի տեսնել միայն ընդհանուր զանգվածի մեջ, նա ավելի շատ պետք է առանձնանա այդ զանգվածից և ուսուցչի աչքին երևա բնավորության ինքնատիպ գծերով, - ասում է Լյուդմիլա Յարամիչյանը:

Դասն ավելի հետաքրքիր դարձրեց քառաբաժան աղյուսակը.

ՊԱՏՆԱԿ	ԶԳՍՈՒՄՆԵՐՆ
ՀԱՅՆԻ	ԿՈՇԵ

Ասեմ պիտի, որ ուսուցչուհին պրպտունների մեջ է՝ ինչպես անել, ինչ մեթոդներ ու հնարներ կիրառել, որպեսզի աշակերտները գեղարվեստական գրականություն կարդան: Չէ որ հիմնականում շատ կարդալով է, որ ձեռք են բերում հարուստ գիտելիքներ:

- Ես եկա այն եզրակացություն, որ ամեն դասաժամ պետք է կազմակերպել յուրովի: Անընդհատ պետք է փոխել կիրառվող հնարներն ու մեթոդները՝ ցանկալի արդյունքն ստանալու համար, - հավելեց վաստակաշատ ուսուցչուհին:

**Լ. ՆՏՐՍԻՍՅԱՆ**  
**Սյրեկ Ա. Սախարովի անվ.**  
**հ. 8 ավագ դպրոցի**  
**մեթոդավարման նախագահ**

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԳՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցում անցկացվեց Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին նվիրված միջոցառում, որը կազմակերպել էր հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Մանուշ Բալայանը: Նպատակն էր մեծարել մեծ սիրերգակին: Միջոցառման ողջ ընթացքում կարևորվեց Սայաթ-Նովայի պոեզիան, իսկ Կարեն Խաչատրյանն իր անզուգական կատարումով հմայեց ներկաներին: Աշակերտներից մեկը ներկայացել էր Սայաթ-Նովայի տարազով ու քամանչայով, որն էլ մեզ տեղափոխեց սայաթնովյան աշխարհ: Իսկ նրա անմահությունը կրկին հաստատվեց Թումանյանի խոսքերով.

Տաղով եկավ, ախով գնաց Սայաթ-Նովան,  
Երգով եկավ, վերջով գնաց Սայաթ-Նովան,  
Սիրով եկավ, սրով գնաց Սայաթ-Նովան,  
Սիրով մնաց Սայաթ-Նովան:

Բազմաթիվ միջոցառումների կազմակերպիչ Ս. Բալայանի հերթական այս դասն էլ մեծ բավականություն պատճառեց ներկաներին:

\*\*\*

Հայկ Բալասանյանի անվան հ. 5 հիմնական դպրոցի փոխտնօրեն, կենսաբանության ուսուցչուհի Մարինե Խաչատրյանի կազմակերպած «Վատ սովորություններին ասենք՝ ոչ» վերստառությամբ միջոցառումը մեկ ուղղվածությամբ էր. բացառել անչափահասների առողջությունը վտանգող բացասական երևույթները: Երեխաները խոստացան իրենց զեռն պահել ծխախոտից, ալկոհոլից, թմրամիջոցներից: Նրանց ելույթները ներկաներին վստահություն ներշնչեցին: Իհարկե, 21-րդ դարի մարդը պետք է ավելի քան սթափ լինի և ապրի առողջ կյանքով:

\*\*\*

Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցը բարձր մակարդակով նշեց Սոնթե Մելքոնյանի ծննդյան 55-ամյա տարեդարձը, որը կազմակերպել էր պատմության ուսուցչուհի Կարինե Պետրոսյանը 9-րդ «ա» դասարանի աշակերտների հետ: Փոխտնօրեն ժամանա Գրիգորյանի բազմամյա խոսքից հետո դիտեցինք տեսաֆիլմի մի դրվագ, որն ավելի ընդգծեց հայ ժողովրդի նվիրված գավակի՝ Սոնթեի մարդկային վեհ կերպարը: Հուզիչ էր ամեն ինչ՝ աշակերտների արտահայտած յուրաքանչյուր խոսք, երգ, պար, ջութակի և դաշնամուրի հոգեպարար երաժշտությունը: Միջոցառման ներկայացածներս, ասես մեկ մարմին մեկ հոգի՝ զգում էինք նույնը՝ մորմոք ու կակիծ, բայց և հպարտություն... «Եթե կորցնենք Արցախը, մենք կշրջենք հայոց պատմության վերջին էջը...» Եվ մենք չկորցրինք Արցախը, քանի որ թիկունքում ունենք հայոց քաջազուններ, հայրենասիրությամբ տոգորված սերունդ: Դա ռազմահայրենասիրական մեծ դաս էր: Միջոցառումը բարձր գնահատեցին դպրոցի տնօրեն Ա. Պողոսյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Խանյանը, պատմության հա-

մաքաղաքային մեթոդավարման նախագահ Ա. Հայրապետյանը, քաղաքապետարանի ԿՍ բաժնի գլխավոր մասնագետ Գրետա Գրիգորյանը:

\*\*\*

Ավ. Իսահակյանի անվան հ. 10 հիմնական դպրոցում նշվեց Սպիտակի երկրաշարժի 24-րդ տարելիցը: Բեմում 5-րդ դասարանի աշակերտներն էին: Բացման խոսքով հանդես եկավ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, 5-րդ «ա» դասարանի դասղեկ Լիլյա Սարգսյանը, ով խոսեց 1988 թվականի ավերիչ երկրաշարժի և նրա հետևանքների մասին: Այնուհետև հիմնադրոցից հանդես եկան գրական-երաժշտական մոնտաժով: Նրանք առավել հուզիչ ներկայացրին «Քեզ համար, Հայաստան» երգը: Դիտեցին տեսաֆիլմ՝ «Քարե քաղաքից» փոքրիկ հատված:

Շատ կարևոր է, որ մեր աշակերտները և մենք՝ մեծերս, հիշենք մեր անմեղ զոհերին, հարգենք նրանց հիշատակը և հուսանք, որ կունենանք անկորուստ ապագա:

\*\*\*

Խ. Աբովյանի անվան հ. 1 հիմնական դպրոցում կազմակերպվեց Սահմանադրության օրվան նվիրված դաս-միջոցառում՝ եզակի իր տեսակի մեջ: Հրավիրված էին «Մարդու իրավունքների պաշտպան»-ի գրասենյակի աշխատողները՝ նրա ղեկավար Յուրի Հայրապետյանի գլխավորությամբ: Նրանցից շատերը ժյուրիի անդամներ էին: Միջոցառման մասնակիցները 9-րդ «ա» դասարանի աշակերտներն էին, ովքեր բաժանված էին երկու խմբի՝ «Մարդու իրավունքների պաշտպան» և «Օրենքի ուժ», իսկ կազմակերպիչը փոխտնօրեն, պատմության ուսուցչուհի Լենա Ավանեսյանն էր: Այն բաղկացած էր երկու մասից: Առաջին մասում երեխաները ներկայացրին սահմանադրական մտքի զարգացման ընթացքը: Երկրորդ մասը մրցութային էր՝ բաղկացած չորս փուլից: Հարցերը բացառապես սահմանադրության հոդվածներն էին շոշափում: Հարկ է նշել, որ աշակերտները հիացրին իրենց ճիշտ ու գրագետ պատասխաններով: Զգացվեց նրանց խոսքի կուլտուրան, վերաբերմունքը, հարգանքը մեկը մյուսի հանդեպ: Արդյունքում «Օրենքի ուժ» թիմը 1 միավորով զիջեց «Մարդու իրավունքների պաշտպան» թիմին: Դպրոցի տնօրեն Բոնելյա Դադայանը բարձր գնահատեց թե՛ աշակերտներին, թե՛ ուսուցչուհուն: Շնորհակալական խոսքով հանդես եկավ Յու. Հայրապետյանը, ով ողջունեց միջոցառումը և խորհուրդ տվեց, որ բոլոր դպրոցներում էլ կազմակերպեն նման միջոցառումներ: Որպես ապագա քաղաքացիներ՝ աշակերտները պետք է քաջատեղյակ լինեն մեր պետության հիմնական օրենքի՝ Սահմանադրության բովանդակությանը:

**Անահիտ ՄԵՍՐՈՒՅԱՆ**  
**Սյրեկանակերտի ՄՊՍԿ մեթոդիստ**

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՈՒՅԻՆԵՐԸ

Դեկտեմբերի 19-ին Երևանի պետական համալսարանի դահլիճում «Քայլեր և արձագանք» գրքի շնորհանդեսն էր: Գիրքը նախածնունդից և լույս տեսավ 2011թ. անցկացված ուսանող-ստեղծագործողների համահայկական (Հայաստան-Արցախ-Սփյուռք) մրցույթի արդյունքում: Գրական այդ մրցույթը կազմակերպել էր Երևանի պետական համալսարանի մշակույթի բաժնի վարիչ Կարինե Դավթյանը՝ Հայաստանի և Արցախի գրողների միությունների աջակցությամբ: Գրքում տպագրված գործերը ներկայացնում են արդի գրական դաշտի երիտասարդ թևը՝ արժարժան թեմաների հրատապությամբ, չնայած որոշ ուսանողների համար դա առաջին տպագրությունն էր:


Գրքում տեղ գտած ուշագրավ գործերի բեմականացմամբ՝ Երևանի պետական համալսարանի թատրոնի ստուդիայի անդամների կողմից: Հնչեցին դաշնամուրային և վոկալ կատարումներ:

ՀՀ գրողների միության նախագահ Լևոն Անանյանն իր բովանդակային խոսքում ասաց. «Այս ծնունդին գորշ պատկերը միանգամից վերափոխվեց և լցվեց հոգևոր ջերմությամբ»:

ԵՊՀ գրական ստուդիայի ղեկավար Սարգիս Մխիթարյանը կարևորեց միջոցառման խորհուրդը, քանի որ բացի «Քայլեր և արձագանք» գրքից, արդեն ընթերցողի սեղանին է «Գրական համալսարանը»: Նրանում գեղեցիկ են գրական ստուդիայի անդամների գործերը: Շնորհանդեսի ընթացքում արդեն իրենց խոսքն ասացին առաջին մրցանակակիրներ Հ. Ի. Մ. և Ի. Մ. Գ. և Ս. Ս. Ս. Ս. (ՀՀ, ԵՊՀ) և Սոնա Համբարձումյանը (ԼՂՀ,

պետական հավատարմագրված համալսարանի տված գիտելիքներն ինձ հնարավորություն ընձեռեցին ոչ միայն մրցույթի մեջ մտնել երկրում մեծ հռչակ ու անուն վայելող բուհերի ուսանողության հետ, այլ նաև առաջնությունը գրավել: Այս ամենի համար շնորհակալ եմ բուհի պրոֆեսորադասախոսական կազմին, տնօրենությանը, ամբողջ կոլեկտիվին: Ես և իմ ընկերները գիտակցում ենք, որ երկրի համար չկա ավելի մեծ հարստություն, քան գիտելիք: Մեր երկրի ամենաարժեքավոր հարստությունը գիտելիքն է»:

Մասնակիցների ջերմ ծափողջույններից պարզ դարձավ, որ ուսանող-ստեղծագործողների մրցույթն, իրոք, հասել է իր նպատակին: Վերջում նոր լույս տեսած գրքերից բազմաթիվ օրինակներ նվիրվեցին երիտասարդ հեղինակներին, շնորհանդեսի մասնակիցներին:



Նվարդ ՆԱՎԱՍԱՐԱՅԱՆ Բ. ԵՐԵՎԱՆ

ԱՄԱՆՈՐՅԱՆ ՆՎԵՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԳՐԱՍԵՐՆԵՐԻՆ

Տարեմուտին հրաշալի նվեր ստացավ մայրաքաղաքի ընթերցասեր հասարակությունը: Սուրբազանի անվան քաղաքային գրադարանը՝ հիմնանորոգ ու հարմարավետ, իր դռները բացեց ընթերցողների առաջ: Տասնամյակներ ի վեր այն եղել է քաղաքի լավագույն մշակութային և գրական օջախներից մեկը, որի հյուրընկալ հարկի ներքո կազմակերպվող միջոցառումները միշտ էլ ուսանելի և հետաքրքիր են եղել:


հնուստ և եռանդուն գրադարանավարուհին, այնպիսի հարազատությամբ դիմավորեց ինձ, ասես վաղուցվա մտերիմներ էինք: Այդ օրվանից էս դարձա գրադարանի մշտական հաճախորդներից, իսկ երբ այն տեղափոխվեց ներկայիս վայրը, օրերով ու շաբաթներով օգնում էի աշխատողներին՝ կարգի բերելու ու դասավորելու գրքերը և մի անասելի երջանկություն էի ապրում գրքերի աշխարհում:

Տարիներ անց տիկին Մարիայի շնորհիվ նորից կապվեցի գրադարանին, ինձ համար արդեն սիրելի դարձած կոլեկտիվի՝ զանազան առիթներով կազմակերպած միջոցառումներին մասնակցելու հրավերով և միշտ էլ հիացմունքով ու երախտագիտությամբ էի հեռանում: Տիրուց սրտացավությանը կոլեկտիվը քանիցս դիմել է իշխանություններին՝ կոյուղու կաթոցից փչացող գրքերը փոխելու, գրադարանում նորոգման աշխատանքներ կատարելու խնդրանքով: Գրադարանավարի օրվան նվիրված տոնական միջոցառումների ժամանակ անգամ չէին մոռանում բարձրաձայնել իրենց հոգս ու ցավի մասին՝ պատկան մարմինների ուշադրության կենտրոնում պահելով գրադարանի խնդիրները:

նախկին քաղաքապետ Վ. Սիբայեյանին, ում աջակցությամբ լուծվեց գրադարանի ջերմացման հարցը: Շնորհավորանքի խոսք ասացին ու արտասանությանի հանդես եկան գրադարանի փոքրիկ ընթերցողներից Սուրենը, ուսանողուհի Ա. Բաղդույանը, կոլեկտիվի աշխատանքը բարձր գնահատեց թատրոնի գրական մասի վարիչ Կ. Ավակյանը: Քաղաքապետ Ս. Գրիգորյանը, շնորհավորելով գրադարանի կոլեկտիվին և մայրաքաղաքի գրասեր հասարակությանը, ընդգծեց գրի ու գրականության հանդեպ հայ ժողովրդի առանձնահատուկ վերաբերմունքը՝ կարևորելով գրքի դերը մատաղ սերունդի դաստիարակության գործում:

ՅՈՒՐՈՒՆԱԿ ԳԻՐՔ ՀԱՆԱՊԱՐԿԻ

ԼՂՀ զոհված ազատամարտիկների հարազատների միությունը հիրավի դարձել է հայրենասիրության, Արցախյան զոհանքի պատմությունը սերտելու յուրօրինակ օջախ, սրբության խորան: Նոր տարում այստեղ կազմակերպված զանգվածային առաջին հավաքույթի առիթը հերթական ուշագրավ նախածնունդն էր՝ միության թանգարանի ուղեցույցը՝ «Անմահության խորան» վերտառությամբ, որում ամփոփված են թանգարանի նմուշները, զոհված ազատամարտիկների մասին տեղեկություններ և այցելուների ուշագրավ, սրտառուզ գրառումները, ինչպես նաև մեր Ազատամարտի ու Արցախի մասին պատմական տվյալներ: Շնորհանդեսին ներկա էին մտավորականության, կազմակերպությունների ներկայացուցիչներ, զինվորականներ: Գիրքը եռալեզու է, ունեցել է իր նախորդ երկու հրատարակությունները, սակայն այստեղ ավելի ընդգրկում տվյալներ են: Այն կազմել է թանգարանի տնօրեն, ԶԱՀՄ նախագահ Գայյա Առստամյանը:



Բացման խոսքում պատմական գիտությունների թեկնածու Սիեր Հարությունյանը կարևորեց գրքի հրատարակումը: Նա և մյուս ելույթ ունեցողներն իրենց հիացմունքը հայտնեցին Գ. Առստամյանի՝ որդեկրոնյա մոր, միության ու թանգարանի հիմնադրի և մի շարք գրքերի հեղինակի հոգու վերաբերյալ առաջին, որ կարողանա է հոգեկան տվյալների մեջ նաև ստեղծագործել ու նահատակների սիրանքը ներկայացնել: «Այսօր էլ տղաները ճիշտ ապրելու ու գործելու դասեր են տալիս: Մենք ամեն օր պետք է նրանց հանդիպենք, եթե ոչ թանգարանում, զոհն մեր մտքի մեջ, մեր հոգու տաճարում նրանց ամենալավ տեղը հատկացնենք և ճիշտ ապրելու նրանց խորհուրդը լսենք: Այդ մարդիկ ոչ միայն ապրում են, այլև մեզ ստիպում են ճիշտ ուղղությամբ քայլել»,- ասաց ԼՂՀ գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանը: Նրա համոզմամբ՝ մասն առեցրը պետք է լինեն յուրաքանչյուր հարկի տեր, քանզի նրանք ուղեկից են մեր գալիք ճանապարհների համար:

«Սերոբայ Մաշտոց» համալսարանի ղեկավար Դոնարա Գաբրիելյանը, քաղաքապետարանի ԿՍ բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանը, վաստակավոր նկարիչ Լավրենտ Դալայանը, որն իր ձևավորած «Ղարաբաղի հորովել» գեղագրող գիրքը նվիրեց երկու զավակներին կորցրած Արփիկ Ալթունյանին և Գայյա Առստամյանին: Հուզիչ էր ջուրթակով և զոհված ազատամարտիկ Կամո Պետրոսյանի կիթառով Բորիս Բալայանի նվագն ու երգը:

Մելանյա ՄԻՆՈՒՅԱՆ

Սեփ. լրատվություն

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՆ

ՄԵՐ ՀՈՒՇԵՐՈՒՄ ԿՄՆԱՔ...



Բոլոր դարաշրջաններում, բոլոր ժողովուրդների կողմից միշտ էլ բարձր է գնահատվել ուսուցչի մասնագիտությունը: Ես միշտ էլ խոր երախտագիտությամբ եմ վերհիշում ինձ դասավանդած ուսուցիչներին և ցավ ապրում, երբ նրանք բռնում են հավերժի ճամփան: Դեռ այդպիսի մի խոր ցավ զգացի, երբ լսեցի իմ սիրելի ուսուցիչ, 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Շահեն Քամալյանի մահվան մասին:

Շնվել է 1925 թվականին, ճարտար գյուղում: 45 տարի շարունակ դպրոցը հարազատ օջախ է եղել ընկեր Քամալյանի համար: Երկար ու ծիգ տարիներ նա մտել է դասարան և իր հոգու գանձերը շայլորեն բաժանել սաներին: Գեղեցիկ ու հետաքրքիր է եղել ընկեր Քամալյանի աշխատանքային ուղին՝ լի մվիրունի ու պատասխանատվության զգացումով: Սա թե ինչու նա իր ողջ մանկավարժական գործունեության ընթացքում եղել է ուսուցիչների, կրթական համակարգի աշխատողների, ծնողների և աշակերտների, մեր հասարակության սիրված մարդկանցից մեկը:

Ստեղծագործ ոգին նրան մղել է արարելու և արարվածին նորը ավելացնելու, կատարելագործելու: Նրա հմուտ ձեռքերով է կանաչապատվել ոչ միայն դպրոցի մերձակայքը, այլև ամբողջ գյուղը: Այժմ կան այդ ծառերը՝ որպես կենդանի վկաներ հավերժ կանաչող նրա անցած արգասաբեր ուղու, որի մի կողմում ծառն է հողի մեջ խրված իր խոր արմատներով, մյուսում՝ բարու ու ճշմարտի սերմը հոգում նրա բազում աշակերտները:

Սիրելի ուսուցիչ, քո անցած ճանապարհը երկար էր, բայց առավել՝ բեղուն, մվիրաբերուն՝ պատիվ ու ակնածանք պարգևող: Ընկեր Քամալյանը մի յուրահատուկ, մաքրամաքուր, հայեցի հակումով էլ էր աչքի ընկնում. սիրում էր գեղարվեստական գրականությունը, հիամալի ասմունքում էր ու նվագում, վերակենդանացնում հնի մեր գանձերը: Կարծես թե այսօր էլ լսում եմ նրա «Լուր-դա-լուրի» հոգեհնա մեղեդիները:

Հանգիստ մնջեք, սիրելի ուսուցիչ: Երջանկափառաբան ձեր անունը միշտ վառ կմնա այնքան ժամանակ, քանի կա, ապրում է ձեր սաներից թեկուզ մեկը:

**Ռուզաննա ԱՎԵՏԻՍՅԱՆ**  
**Շուշիի Ա. Խաչատրյանի անվ. հումանիտար քոլեջ**

ՍՎԵՏԼԱՆԱ ԵՐՎԱՆԻ ՀՍԿՈՒՅԱՆ



Կյանքի 75-րդ տարում, երկարատև ու ծանր հիվանդությունից հետո, վախճանվեց հանրապետության լավագույն մանկավարժներից մեկը՝ դաստիարակման բնագավառում, աշխատանքի վետերան Սվետլանա Երվանդի Հակոբյան-Գաբրիելյանը:

Շնվել է 1937թ., Բաքու քաղաքում, որտեղ և ավարտել է միջնակարգ կրթությունը: 1957թ. ընդունվել է Բաքվի Վ. Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետը:

Ավարտելով բարձրագույն կրթությունը՝ 1962-ից մինչև 1964 թվականը ուղեգրով աշխատել է Լեռնային Ղարաբաղի Մարտունի ավանի 8-ամյա դպրոցում՝ որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցչուհի: 1964թ. տեղափոխվել է Ստեփանակերտ և իր մասնագիտությամբ աշխատանքի անցել հ. 5 երկարօրյա դպրոցում: Նույն թվականի սեպտեմբերին, ընտանեկան պայմաններից ելնելով, տեղափոխվել է Բաքու և աշխատել նախ հ. 164, իսկ հետո՝ հ. 10 դպրոցներում՝ որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցչուհի:

1966թ. նորից տեղափոխվել է Ստեփանակերտ: 1967թ. աշխատանքի է անցել մայրաքաղաքի հ. 5 երկարօրյա դպրոցում՝ որպես դաստիարակչուհի, իսկ 1982-ից մինչև 1998 թվականը նույն պաշտոնով աշխատել է մայրաքաղաքի հ. 3 դպրոցում:

Սվետլանա Հակոբյանը երկար տարիներ հասարակական հիմունքներով ղեկավարել է Ստեփանակերտի հանրակրթական դպրոցների դաստիարակների բաժանումը: 1986թ. նրան շնորհվել է «Դաստիարակման բնագավառում» պատվավոր կոչում:

Մարդկային շիտակ բնավորության տեր էր Ս. Հակոբյանը: Որտեղ էլ որ աշխատել է նա, աշխատել է սիրով, պատասխանատվության զգացումով, ազնվորեն:

Այդ լավագույն հատկանիշների համար էլ եղել է սիրելի և հարգված գործընկերների, աշակերտների, ծնողների, հասարակության կողմից:

Ցավալի է նման ազնվագույն մարդու կորուստը: Նվիրյալ մանկավարժի, ազնիվ ու շիտակ դաստիարակի պայծառ հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

**ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն**  
**Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժին**

ՌԱԶՄԻԿ ՎԱԶԱԳԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ



Կյանքի 64-րդ տարում հանկարծամահ եղավ 20-րդ դարի լավագույն մանկավարժ Ռազմիկ Վաչագանի Պետրոսյանը:

Շնվել է 1948թ., Մարտակերտ քաղաքում, բանվորի ընտանիքում: 1955թ. ընդունվել է 1966-ին ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է Բաքվի Վ. Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը և այն ավարտել 1970թ:

1970թ. սեպտեմբերից մինչև 1971թ. մայիսը ուղեգրով աշխատել է Աղր. ԽՍՀ Վարդաշենի շրջանի ճալեթի 8-ամյա դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1971-ից մինչև 1972 թվականի մայիսը ծառայել է նախկին ԽՍՀՄ զինված ուժերում: Չորացրվելուց հետո մինչև 1976թ. աշխատել է Վարդաշենի հ. 1 դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, իսկ 1976-ից մինչև 1978թ. եղել է նույն շրջանի ճալեթ գյուղի 8-ամյա դպրոցի տնօրենը:

1978-ին ընտանիքով տեղափոխվել է Ստեփանակերտ և նույն թվականի սեպտեմբերից մինչև 1979թ. մարտը աշխատել որպես «Գիտելիք» ընկերության Ստեփանակերտի քաղաքային վարչության պատասխանատու քարտուղար:

1979թ. մարտից մինչև 1990թ. սեպտեմբերն աշխատել է կուսակցության Ասկերանի շրջկոմում՝ նախ որպես հրահանգիչ, հետո՝ պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչի տեղակալի, ապա բաժնի վարիչի պաշտոններում:

1990թ. սեպտեմբերից մինչև 2008թ. հուլիսը որպես տնօրեն աշխատել է Ստեփանակերտի հ. 5 միջնակարգ, իսկ 2008-ից մինչև 2011թ. նոյեմբերը՝ հ.9 հիմնական դպրոցներում՝ միաժամանակ դասավանդելով հայոց լեզու և գրականություն:

2011թ. նոյեմբերի 1-ից կենսաթոշակառու էր: Ռազմիկ Պետրոսյանը որտեղ էլ որ աշխատել է, բարձր պատասխանատվությամբ է կատարել իր պարտականությունները և հարգված ու սիրված է եղել գործընկերների, ուսուցչական, աշակերտական և ծնողական կոլեկտիվների, ինչպես նաև հասարակության կողմից:

Իր անբասիր աշխատանքի համար Ռ. Պետրոսյանը արժանացել է մի շարք պարգևների. 2001թ.՝ «20-րդ դարի Ստեփանակերտի լավագույն մանկավարժ», 2003թ.՝ մայրաքաղաքի «Տարվա լավագույն տնօրեն» պատվավոր կոչումներին, 2005թ. Հայ գրերի ստեղծման և Ամարասի դպրոցի հիմնադրման 1600-ամյակի առթիվ պարգևատրվել է ԼՂՀ կառավարության պատվոգրով, իսկ 2011 թվականին՝ «ԼՂՀ վարչապետի հուշամեդալով»:

Ռազմիկ Պետրոսյանը ազնիվ, ընկերասեր, հոգատար, հասարակական շահը անձնականից միշտ վեր դասող մարդ-մանկավարժ էր ու ղեկավար:

Ցավալի է այդ ազնվագույն մարդու, մվիրյալ մանկավարժի անժամանակ կորուստը: Ռազմիկ Պետրոսյանի պայծառ հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

**ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն**  
**Ստեփանակերտի քաղաքապետարանի կրթության բաժին**

ԲԱՔՎԵՑԻ ԲՈՐՅԱՆ

Քայլում էր կորացած, ձեռքերը մեջքին հանգուցված, և երբ դիմացից անցողը էր գալիս, սպիտակահեր գլուխը բարձրացնում էր, նայում կարմրած, ջրակլաված աչքերով ու ծանոթանոթի ասում.

- Բարև քե մատաղ, հունցը՞ս:

Իսկ անցողներն անտարբեր նայում էին ու անցնում: Գիտե՞ին, բաքվեցի Բորյան էր, տղային ու աղջկան կորցրած, մի կերպ կնոջ հետ երևան ընկած Բորյան: Քայլում էր փողոցներով և որտեղ նոր կառուցվող տուն էր տեսնում, կանգնում էր, երկար նայում, աշխատողներին մի քանի խորհուրդ տալիս ու գլուխը տնքտնքացնելով գնում: Մարդիկ հետևից նայում էին ու զարմանում Բորյայի խելացի խորհուրդների վրա:

Ո՞ր մեկին այս մարդը բացատրեր, որ ինքը միշտ այսպես խելո՞ւ ու կրակ չի եղել. աշխուժել է եղել, զազանների համար շենքեր է կառուցել: Օրերից մի օր էլ նրանց խելագարված ամբոխից փախչելով՝ թաքնվել է իր իսկ կիսա-

կառուցած շենքի նկուղում, սպասել մինչև մութը ընկնի, ու փողոցները դատարկվեն գազազած խաժամուժից, տազնապը սրտում հասել է տուն ու դուռը բաց, տունը կիսադատարկ տեսել: Նստել է փշրված աթոռի մնացորդին, ու քանի խելքը տեղն էր՝ միտք արել, թե որտեղ կլինեն կինն ու աղջիկը: Տղան ծառայում էր նավատորմում: Չէր հիշում ինչքան էր նստել, դիմացի հարևանի դուռը բացվել էր, ու հարևանը չար հայացքով նրան էր նայել ու ասել.

- Արի, արի կնոջդ վերցրու, կորի՛ր ետեղից, տատս փրկեց:

Նա կարկանատ ներս էր մտել: Կինը բազմոցի ծայրին նստած մղկտում էր, երբ ամուսնուն տեսել էր, ծայրը բարձրացրել էր ու ասել.

- Բորյա, խոխոն տարի՛ն է՛, խոխոն:

Խոսքը աղջկա մասին էր, ուսանող աղջկա մասին: Արյունաշատ գազանները տեսել էին աղջկա սիրունությունը: Իրենց հրամանատարի ցուցումով բռնի ուժով նրան պրկել էին մո-

րից ու տարել իրենց հետ: Բորյան վշտից քարացել էր ու հարևանի ճնշման տակ վերցրել կնոջն ու նստել մի բեռնատար մեքենա, որի թափքում իրար վրա լցված հայեր էին: Ապրանքի նման բարձուն էին հայերին ու տանում թափում Իջևանի սահմանին: Այն ժամանակ հարևանը խոստացավ փնտրել ու գտնել աղջկան, խոստացավ ու չարեց, տղան էլ ծառայությունից հետ չէկավ: Մարդ ու կին սզացին, սզացին, դիմեցին Կարմիր խաչին, բայց ոչ տղային գտան, ոչ աղջկան ու տարիների հետ վիշտը կորացրեց Բորյային: Հիշողության ծալքերից հանեց նրանց, թողեց միայն վերամբարձ կռունկն ու շաղախ ցեխը: Աստված երկի խղճաց նրան, իսկ Բորյայի պահած պահպանած տիկին Դոնարան ձեռքն առավ ավելև ու փողոցներ մաքրեց՝ պահելով ցնորված ամուսնուն:

Բորյային հիշելով՝ հիշեցի Միխայիլ Գորբաչովին, որը Վարդգես Պետրոսյանին ասում էր.

- Դու ի՞նչ ես հասկանում ցեղասպանությունից:

Պատկերացնո՞ւմ եք, հայը չգիտի ինչ բան է ցեղասպանությունը, այն էլ Վարդգես Պետրոսյան հայը, որի գրքերի էջերը երբ շրջում էիր՝ եղեռնի զոհերի տմբոցն էիր լսում: Ախ, Բորյա, Բորյա: Դու ընդամենը ավելացրիր մի անուն ևս եղեռնի զոհերի ցուցակում, ուրիշ ոչինչ: Աշխարհը մնաց նույնը՝ դաժան, բուժ, ցինիկ, ստախոս, իսկ մենք, անգործությունը մեր մեջ խելո՞ւ, սկսեցինք անձնական կացնել «ցեղասպանություն» բառին՝ որակելով նրան կարմիր, սև, սպիտակ գույներով, որից ոչինչ չփոխվեց: Բաքվի հայերի տեղահանությունը չընդունվեց որպես ցեղասպանություն, ու մեր ծայրը մնաց ձայն բարբառո հանապատի...

**Աննա ԱՅՎԱԶՅԱՆ**

ԼՈՒՍԱՐԱՐ  
Իմ քաղաք  
ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

Ստեփանակերտ, Գ. Թումանյան փ. 111, 94-38-99, E-mail: gorctert@mail.ru

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ -----: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 19.01.2013թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ:



Գրանցված է  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
արդարադատության նախարարության կողմից  
2012 թվականի օգոստոսի «23»-ի  
Պետական գրանցման համարը 10512126  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
արդարադատության նախարար  
Ն. Նարինյանյան

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
Կրթութան և գիտության նախարար  
«16» օգոստոսի 2012 թվականի N 145/Ն  
ք. Ստեփանակերտ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
Պաշտպանության նախարար  
«18» օգոստոսի 2012 թվականի N 246 -Ն  
ք. Ստեփանակերտ

## Հ Ա Մ Ա Տ Ե Ղ Հ Ր Ա Մ Ա Ն

### Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հիմնական, Ավագ, Միջնակարգ Հանրակրթական Գործակալություն, Վարժարաններում, Կրթաշատախոսներում, Նախնական Մասնագիտական (Արհեստագործական) Եվ Միջին Մասնագիտական Ուսումնական Հաստատություններում Սովորողների Նախնական Գործակալության Կանոնադրույթին Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 26-ի N 512-Ն որոշման 2-րդ կետին համապատասխան՝

### Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Ն Ք

1. Հաստատել՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նախագորակոչային պատրաստության կանոնադրույթը՝ համաձայն հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ս. Ասրյանին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Կարապետյանին:
4. Սույն հրամանի մասին տեղեկացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի զորամասերի պետերին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչակազմերի ղեկավարներին և Ստեփանակերտի քաղաքապետին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
Կրթութան և գիտության նախարար  
Վ. ԽԱԶՆՏՐՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
Պաշտպանության նախարար  
Մ. ՀԱԿՈՔՅԱՆ

Մարզական

### ՈՒԺԱՅԻՆ ԵՌԱՄԱՐՏԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՄ

ԽՈՍԱՐ



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

11





ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**ՃՆՈՐԱԿՈՐԱՆՔ**

**ՃՆՈՐԱԿՈՐ ՀԻՍՈՒՆԵՐՈՐԴ ԳԱՐՈՒՆԴ, ՔՈՒՅՐԻԿՍ**

**ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ  
ԱՆԽՈՆԶ ՄՇԱԿԸ**

---

**Ո՛Չ՝ ԿՆԱՍԱԿԱՐ ՍՈԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**

---

**ՈՒՍԱԳԼԱՑՈՒԹՅՈՒՆ**

Վանա լիճ

---

**ՇՈՒՇԻԻ ԿԻՐՃՈՒՄ**